

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՉԵԿՈՒՅՑՆԵՐ

ՀԱՏՈՐ 125

№ 2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

ДОКЛАДЫ REPORTS

ТОМ 125
VOLUME

№ 2

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 2025

Հիմնադրվել է 1944 թ.: Լույս է տեսնում տարին 4 անգամ
Основан в 1944 г. Выходит 4 раза в год
Founded in 1944. Published quarterly

Գլխավոր խմբագիր՝ ակադեմիկոս **Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Արա Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ակադեմիկոս Գ.Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ.Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ակադեմիկոս Է.Մ. ՂԱԶԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ.Ռ. ՄԱՆՎԵԼՅԱՆ (գլխ. խմբագրի տեղակալ), ակադեմիկոս Յու.Հ. ՇՈՒԳՈՒՐԻԱՆ, ակադեմիկոս Յու.Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ, Ա.Լ. ՍԱՀԱԿՅԱՆ (պատ. քարտուղար)

Главный редактор академик **Р.М. МАРТИРОСЯН**

Редакционная коллегия: чл.-кор. НАН РА Ара С. АВЕТИСЯН, чл.-кор. НАН РА Р.М. АРУТЮНЯН, академик Г.Г. ГЕВОРКЯН, академик Э.М. КАЗАРЯН, чл.-кор. НАН РА Л.Р. МАНВЕЛЯН (зам. главного редактора), академик Ю.М. СУВАРЯН, академик Ю.Г. ШУКУРЯН, А.Л. СААКЯН (отв. секретарь)

Editor-in-chief Academician **R.M. MARTIROSYAN**

Editorial Board: R.M. HAROUTIOUNIAN, Corresponding Member of NAS RA; Ara S. AVETISYAN, Corresponding Member of NAS RA; Academician G.G. GEVORKYAN; Academician E. M. KAZARYAN; L.R. MANVELYAN (associate editor), Corresponding Member of NAS RA; Academician Yu.H. SHOUKOURIAN; Academician Yu.M. SUVARYAN; A.L. SAHAKYAN (executive secretary)

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան 19, Մարշալ Բաղրամյանի պող. 24/4
Адрес редакции: 0019, Ереван 19, просп. Маршала Баграмяна 24/4
Communication links: address – 24/4 Marshal Bagramian Ave., Yerevan, 0019, Armenia

Phone: (+374 10) 56-80-67 URL: <http://elib.sci.am> e-mail: rnas@sci.am

© НАН РА. Президиум. 2025
© Издательство “Гитутюн” НАН РА. 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Գ.Գ. Գևորգյան, Կ.Ա. Քեռյան, Մ.Պ. Պողոսյան – Միակության թեորեմ Ստրոմբերգի շարքերի համար	7
---	---

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յու.Մ. Սուվարյան – Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգի բարեփոխման գերակայությունները	12
--	----

ՔԻՄԻԱ

Լ.Ա. Սահակյան, Հ.Հ. Խաչատրյան, Խ.Ռ. Ավետիսյան – Մասնագիտական կրթության հիմնախնդիրները՝ որպես ճանաչողության ժամանակակից տեսության ճգնաժամի արտացոլում	28
Ս.Ս. Սահակյան – Գանգուր ավելուկի սերմերում ճարպաթթուների քիմիական կազմի ուսումնասիրությունը	39

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ.Լ. Թերլեմեզյան, Մ.Ա. Սարգսյան, Հ.Ռ. Հարությունյան, Ս.Մ. Սարգսյան, Ա.Ս. Հովսեփյան, Հ.Ն. Մկրտչյան, Ա.Մ. Ավագյան – <i>Bacillus thuringiensis</i> տեսակի տեղական բակտերիական միջատասպանների փորձարկում օդակավոր մետաքսագործի թրթուրների դեմ	44
---	----

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժ.Հ. Վարդանյան – Վարդագիների (<i>Rosaceae</i>) ընտանիքի առաջատար դերը աբորիգեն դենդրոֆլորայի ձևավորման և Հայաստանի ԳԱԱ բուսաբանական այգու դենդրոհավաքածուների ստեղծման գործում	53
Ժ.Հ. Վարդանյան, Արծ.Ա. Գրիգորյան, Ա.Հ. Բեգոյան – Գեղազարդ ծառերի ու թփերի էտի և ձևավորման խնդիրները Երևանի կանաչ տնկարկներում	59

ՀՈԳԵՑԻԶԻՈԼՈԳԻԱ

Ե.Լ. Մինասյան – Հատուկ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների անցկացման գործընթացը պոլիգրաֆի կիրառմամբ հարցման շրջանակներում	67
--	----

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ.Ա. Տեր-Մինասյան, Գ.Կ. Բազիկյան, Վ.Գ. Ֆրոլով, Դ.Մ. Անդրեասյան – Արգանդի պարանոցի քաղցկեղի և նախաքաղցկեղային վիճակների հայտնաբերման սքրինինգային փորձը	73
Ս.Ս. Շահբազյան, Ժ.Է. Բադալովա, Զ.Ա. Տեր-Ավետիսյան – ՄԶԻ-ի ցուցանիշների դինամիկ փոփոխությունները 50-ից ցածր տարիքի ՄԶԻ>50կգ/մ ² ունեցող հիվանդների շրջանում ստամոքսի ստանդարտ և մոդիֆիկացված լապարասկոպիկ երկայնակի մասնահատումից հետո ..	90

ԴԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ս. Գրիգորյան, Է.Ա. Ավետիսյան, Ա.Ա. Պետրոսյան, Ա.Ա. Հարությունյան, Ռ.Գ. Պարոնիկյան – 2-հիդրօքսի-3-(2-(ցիկլոպենտիլթիո)էթիլ)-4H-	
---	--

պիրիդո[1,2-а]պիրիմիդին-4-ոնի ազդեցությունը մոնոամինօքսիդազայի վրա նշաձև մարմնի ակտիվության և հուզական վիճակների կարգավորման մեջ	99
Ռադիկ Մարտիրոսյան	109

СО ДЕР Ж А Н И Е

МАТЕМАТИКА

<i>Г.Г. Геворкян, К.А. Керян, М.П. Погосян</i> – Теорема единственности для рядов Стромберга	7
--	---

ЭКОНОМИКА

<i>Ю.М. Суварян</i> – Приоритеты реформирования системы управления научной и научно-технической деятельностью	12
---	----

ХИМИЯ

<i>Л.А. Саакян, Г.Г. Хачатрян, Х.Р. Аветисян</i> – Проблемы профессионального образования как результат кризиса современной теории познания	28
<i>А.С. Саакян</i> – Изучение химического состава жирных кислот в семенах щавеля курчавого	39

БИОЛОГИЯ

<i>Г.Л. Терлемезян, М.А. Саркисян, А.Р. Арутюнян, С.М. Саркисян, А.С. Овсепян, А.Н. Мкртчян, А.М. Авагян</i> – Испытания местных бактериальных инсектицидов вида <i>Bacillus thuringiensis</i> против гусениц кольчатого шелкопряда	44
---	----

БОТАНИКА

<i>Ж.А. Вардамян</i> – Ведущая роль семейства Розоцветных (<i>Rosaceae</i>) в формировании аборигенной дендрофлоры и создании дендроколлекции Ботанического сада НАН Армении	53
<i>Ж.А. Вардамян, Арц. А. Григорян, А.Г. Бегоян</i> – Задачи обрезки и формирования декоративных деревьев и кустарников в зеленых насаждениях Еревана	59

ПСИХОФИЗИОЛОГИЯ

<i>Е.Л. Минасян</i> – Процесс проведения специальных психофизиологических исследований в рамках опроса с применением полиграфа	67
--	----

МЕДИЦИНА

<i>В.А. Тер-Минасян, Г.К. Базикян, В.Г. Фролов, Д.М. Андреасян</i> – Опыт скрининга рака шейки матки и предраковых состояний	73
<i>С.С. Шахбазян, Ж.Э. Бадалова, З.А. Тер-Аветикян</i> – Динамические изменения массы тела у пациентов моложе 50 лет с ИМТ>50кг/м ² после стандартной и модифицированной лапароскопической продольной гастрэктомии ..	90

ФАРМАКОЛОГИЯ

<i>А.С. Григорян, Э.А. Аветисян, А.А. Петросян, А.А. Арутюнян, Р.Г. Пароникян</i> – Влияние 2-гидрокси-3-(2-(циклопентилтио)этил)-4Н-пиридо[1,2-а]пиримидин-4-она на моноаминоксидазы в регуляции активности	
--	--

миндалевидного тела и эмоциональных состояний	99
Радик Мартиросян	109

CONTENTS

MATHEMATICS

<i>G.G. Gevorgyan, K.A. Keryan, M.P. Poghosyan</i> – A uniqueness theorem for Stromberg series	7
--	---

ECONOMICS

<i>Yu.M. Suvaryan</i> – Priorities of reforming the system of management of scientific and technical activities	12
---	----

CHEMISTRY

<i>L.A. Saakyan, G.G. Khachatryan, Kh.R. Avetisyan</i> – Problems of professional education as a result of the crisis of modern theory of knowledge.....	28
<i>A.S. Sahakyan</i> – Study of the chemical composition of fatty acids in curly sorrel seeds	39

BIOLOGY

<i>H.L. Terlemezyan, M.A. Sargsyan, H.R. Harutunyan, S.M. Sargsyan, A.S. Hovsepyan, H.N. Mkrtchyan, A.M. Avagyan</i> – Testing of local bacterial insecticides of the <i>Bacillus Thuringiensis</i> species against <i>Malacosoma neustria</i> caterpillar	44
--	----

BOTANY

<i>Zh.H. Vardanyan</i> – The leading role of the <i>Rosaceae</i> family in the formation of aboriginal dendroflora and the creation of the dendrocollection of the Botanical Garden of NAS RA	53
<i>Zh.H. Vardanyan, Arts.A. Grigoryan, A.H. Begoyan</i> – Issues of pruning and shaping ornamental trees and shrubs in the green spaces of Yerevan.....	59

PSYCHOPHYSIOLOGY

<i>E.L. Minasyan</i> – The Process of special psychophysiological research within the framework of the survey using a polygraph.....	67
--	----

MEDICINE

<i>V.A. Ter-Minasyan, G.K. Bazikyan, V.G. Frolov, D.M. Andreasyan</i> – Screening experience of cervical cancer and precancerous conditions	73
<i>S.S. Shahbazyan, Zh.E. Badalova, Z.A. Ter-Avetikyan</i> – Dynamic changes in BMI indicators in patients under the age of 50 with BMI>50kg/m ² after standard and modified laparoscopic sleeve gastrectomy	90

PHARMACOLOGY

<i>A.S. Grigoryan, E.A. Avetisyan, A.A. Petrosyan, A.A. Arutyunyan, R.G. Paronikyan</i> – The effect of 2-hydroxy-3-(2-(cyclopentylthio)ethyl)-4H-pyrido[1,2-a]pyrimidin-4-one on monoamine oxidases in regulating the activity of the amygdala and emotional states	99
Радик Мартиросян	109

MATHEMATICS

UDC 517.521

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-7

Academician G.G. Gevorkyan, K.A. Keryan, M.P. Poghosyan

A Uniqueness Theorem for Stromberg Series

(Submitted on 13/V 2025)

Keywords: *Stromberg series, uniqueness problem, reconstruction theorem*

Introduction. Studies of the uniqueness of series in some classical orthogonal systems occupy an important place in the theory of series in these systems. In the theory of uniqueness of trigonometric series of fundamental importance is Cantor's theorem (see [1]), which says that if trigonometric series converges to zero everywhere, then all the coefficients of this series are equal to zero. Further, many authors were engaged in the study of the uniqueness of trigonometric series.

The investigation of the uniqueness of series in the Haar system started with the papers [6, 8, 9]. In these papers, a Cantor-type theorem is proved for Haar series.

In [7] it is proved counterparts of the de la Vallée-Poussin theorem for series in Haar and Walsh systems whose coefficients satisfy certain necessary conditions.

Investigations of uniqueness for series in the Franklin system began recently. The definition of the orthonormal Franklin system $\{f_n(x)\}_{n=0}^{\infty}$ will be given below. In [3] the following theorem is proved.

Theorem 1. *If the Franklin series converges to zero everywhere, then all the coefficients of this series are equal to zero.*

In [2] it is stated that any singleton is not a uniqueness set for Franklin series, i.e. for any $x_0 \in [0, 1]$ there exists a nontrivial Franklin series which converges to zero everywhere except the point x_0 . The coefficients of these series satisfy the relation $a_n = O(\sqrt{n})$.

Z. Wronicz constructed a non-trivial Franklin series for which

$$\lim_{k \rightarrow \infty} \sum_{n=0}^{2^k} a_n f_n(x) = 0, x \in [0,1]. \quad (1)$$

In [4], the following problem was posed: Will all coefficients a_n be equal to zero if both (1) is satisfied and $a_n = o(\sqrt{n})$? In [11] Z. Wronicz gave a positive answer to this question.

Theorem 2 (Z. Wronicz). *If $a_n = o(\sqrt{n})$ and (1) is satisfied, then all coefficients a_n are equal to zero.*

In [5], using methods different from those used by Z. Wronicz, the following theorem is proved.

Theorem 3. *Let $\sup_i \frac{n_{i+1}}{n_i} < \infty$ and partial sums $S^{(i)}(x) := \sum_{k=0}^{n_i} a_k f_k(x)$ of the series $\sum_{k=0}^{\infty} a_k f_k(x)$, with coefficients $a_n = o(\sqrt{n})$ converge in measure to a bounded function f . Then this series is the Fourier-Franklin series of the function f .*

Definition of the Stromberg system, its periodized version and statements of the main results

In [10] J.O. Stromberg introduced spline wavelet system on $\mathbb{R}^n$. Here we recall the definition only on $\mathbb{R}$.

Let $A_0 = \mathbb{Z}_+ \cup \{0\} \cup \frac{1}{2}\mathbb{Z}_-$ and $A_1 = A_0 \cup \{\frac{1}{2}\}$. A_0 splits $\mathbb{R}$ into intervals $\{I_\sigma\}_{\sigma \in A_0}$ (σ is the left endpoint of I_σ). Let $m \in \mathbb{Z}_+$ and S_0^m be the subspace of functions f in $L^2(\mathbb{R})$ such that $f \in C^m(\mathbb{R})$ and is real polynomial of degree $m+1$ on each I_σ , $\sigma \in A_0$. Let S_1^m be the corresponding subspace of $L^2(\mathbb{R})$ with set A_0 replaced by A_1 . It is clear that S_0^m is a subspace of S_1^m and has codimension 1 in S_1^m . Therefore there is a function τ in $L^2(\mathbb{R})$ that is a uniquely defined up to sign by conditions $\tau \in S_1^m$,

$$\int_{\mathbb{R}} \tau(x) f(x) dx = 0, \quad \forall f \in S_0^m \quad (2)$$

$$\|\tau\|_{L^2} = 1.$$

J.O. Stromberg proved that system $\{f_{j,k}(x)\}_{(j,k) \in \mathbb{Z}^2}$, defined by formula

$$f_{j,k}(x) = 2^{j/2} \tau(2^j x - k), \quad j, k \in \mathbb{Z}, \quad x \in \mathbb{R}. \quad (3)$$

is a complete orthonormal system in $L^2(\mathbb{R})$ and unconditional basis in $H^p(\mathbb{R})$, $p > \frac{1}{m+1}$. Recall that if the system defined by formulas (3) forms complete orthonormal system in $L^2(\mathbb{R})$ the function τ is called wavelet.

To prove the latter he obtained some inequalities for τ and derivatives of τ . We need the following inequality from [10]

$$|\tau(x)| \leq C r^{|x|}, \quad x \in \mathbb{R}, \quad r \in (0,1) \text{ and } C \text{ is a positive constant.} \quad (4)$$

From (2) and (4) it follows that τ is integrable on $\mathbb{R}$ and $\int_{-\infty}^{+\infty} \tau(t) dt = 0$.

In (4) constants r and C depend on m . In this paper m is arbitrary fixed non-negative integer. Therefore we omit m and write C instead of C_m .

In [10] J.O. Stromberg introduced another orthonormal system $\{F_n(x)\}_{n=0}^{\infty}$ on $[0,1]$.

Denote

$$F_{j,k}(x) = \sum_{l \in \mathbb{Z}} f_{j,k}(x-l), \quad j, k \in \mathbb{Z}.$$

It is clear that

$$F_{j,k}(x) = F_{j,k}(x+1) \text{ and } F_{j,k+2^j}(x) = F_{j,k}(x).$$

For fixed $j \geq 0$ there exist only 2^j distinct functions $F_{j,k}(x)$,

$$k = 0, 1, \dots, 2^j - 1.$$

Denote

$$F_n(x) := F_{j,k}(x), t_n := \frac{2k-1}{2^{j+1}}, \\ \text{if } n = 2^j + k, \quad j \geq 0, k = 0, \dots, 2^j - 1$$

$$\text{and } F_0(x) = 1.$$

It follows from (4) that

$$|F_n(x)| \leq C_1 2^{\frac{j}{2}} r^{2^j |x - \frac{k}{2^j}|} \leq C_2 \sqrt{n} q^{n|x-t_n|}, \text{ where } q = \sqrt{r}.$$

The main results being announced in this article are the following theorems:

Theorem 4. Let n_i be an increasing subsequence of natural numbers so that

$$\sup_i (n_{i+1} - n_i) =: M < \infty. \quad (5)$$

If the coefficients of the Stromberg series $S(x) := \sum_{n=0}^{\infty} a_n F_n(x)$ satisfy the condition

$$a_n = o(\sqrt{n}), \quad (6)$$

the partial sums $S^{(i)}(x) := \sum_{n=0}^{2^{n_i}-1} a_n F_n(x)$ converge in measure to 0 and

$$\sup_i S^{(i)}(x) < \infty \text{ for } x \in B, \text{ where } B \text{ is a countable set,} \quad (7)$$

then $a_n = 0$ for $n \geq 0$.

The following theorem is a generalization of the previous one.

Theorem 5. If an increasing sequence n_i satisfies (5), the coefficients of the Stromberg series $\sum_{n=0}^{\infty} a_n F_n(x)$ satisfy the condition (6), the partial sums $S^{(i)}(x)$ converge in measure to a bounded function f and (7) holds, then this series is the Fourier-Stromberg series of the function f .

Yerevan State University

E-mails: ggg@ysu.am, karenkeryan@ysu.am, michael@ysu.am

Academician G.G. Gevorkyan, K.A. Keryan, M.P. Poghosyan

A uniqueness theorem for Stromberg series

Some uniqueness theorems for series in the Stromberg's periodized system are proved in this work. In particular, if the partial sums $S^{(i)}(x) := \sum_{n=0}^{2^{n_i}-1} a_n F_n(x)$ of the Stromberg series $\sum_{n=0}^{\infty} a_n F_n(x)$ converge in measure to a bounded integrable function f and $\sup_i |S^{(i)}(x)| < \infty$ when $x \notin B$, where B is some countable set, with $a_n = o(\sqrt{n})$ and $\sup_i (n_{i+1} - n_i) < \infty$, then this series is the Fourier-Stromberg series of the function f .

Ակադեմիկոս Գ.Գ. Գևորգյան, Կ.Ա. Թեդյան, Մ.Պ. Պողոսյան

Միակության թեորեմ Ստրոմբերգի շարքերի համար

Այս աշխատանքում ապացուցված են Ստրոմբերգի պարբերականացված համակարգի շարքերի համար միակության որոշ թեորեմներ: Մասնավորապես, եթե Ստրոմբերգի շարքի $S^{(i)}(x) := \sum_{n=0}^{2^{n_i}-1} a_n F_n(x)$ մասնակի գումարները $\sum_{n=0}^{\infty} a_n F_n(x)$, ըստ չափի, զուգամիտում են f սահմանափակ ինտեգրելի ֆունկցիային և $\sup_i |S^{(i)}(x)| < \infty$, երբ

$x \notin B$, որտեղ B -ն որևէ հաշվելի բազմություն է, $a_n = o(\sqrt{n})$ և $\sup_i (n_{i+1} - n_i) < \infty$, ապա այս շարքը f ֆունկցիայի Ֆուրիե-Ստրոմբերգի շարքն է:

Академик Г.Г. Геворкян, К.А. Керян, М.П. Погосян

Теорема единственности для рядов Стромберга

В работе доказаны некоторые теоремы единственности для рядов по периодической системе Стромберга. В частности, если частичные суммы $S^{(i)}(x) := \sum_{n=0}^{2^{n_i}-1} a_n F_n(x)$ ряда Стромберга $\sum_{n=0}^{\infty} a_n F_n(x)$ сходятся по мере к интегрируемой функции f и $\sup_i |S^{(i)}(x)| < \infty$ при $x \notin B$, где B – некоторое счетное множество, причем $a_n = o(\sqrt{n})$ и $\sup_i (n_{i+1} - n_i) < \infty$, то этот ряд является рядом Фурье-Стромберга функции f .

References

1. Cantor G. Mathematische Annalen. 1872, V. 5, pp. 123–132.
2. Gevorkyan G.G. Approximation and Probability, Banach Center Publication. 2006, V. 72, pp. 85–92.
3. Gevorkyan G.G. Sbornik: Mathematics. 2016, V. 207, pp. 30–53.
4. Gevorkyan G.G. Sbornik: Mathematics. 2018, V. 209, pp. 25–46.
5. Gevorkyan G.G. Sbornik: Mathematics. 2023, V. 214, pp. 197–209.
6. Harutyunyan F.G. Doklady Akademii Nauk Arm. SSR. 1964, V. 38, pp. 129–134.
7. Harutyunyan F.G., Talalyan A.A. Izvestiya Akademii Nauk, seriya Matematicheskaya 1964, V. 28, pp. 1391–1408.
8. Petrovskaya M.B. Izvestiya Akademii Nauk, seriya Matematicheskaya 1964, V. 28, pp. 773 – 798.
9. Skvortsov V.A. Bulletin of Moscow State University, ser. math. 1964, V. 5, pp. 3–6.
10. Stromberg J.O. Wadsworth Mathematical Series. Wadsworth International Group, Belmont, CA, 1983, pp. 475–494.
11. Wronicz Z. Opuscula Mathematics. 2016, V. 41, pp. 269–276.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 001(419.25)+004

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-12

Ակադեմիկոս Յու.Մ. Սուվարյան

Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգի բարեփոխման գերակայությունները

(Ներկայացված է 14/V 2025)

Բանալի բառեր. *գիտություն, տնտեսություն, կրթություն, տեխնոլոգիա, նորաստեղծություն, անվտանգություն, բարեփոխում, կառավարում:*

1. Գիտությունը՝ որպես կառավարման օբյեկտ

Ըստ հանրագիտարանային մեկնաբանության՝ գիտությունը մարդկային հոգևոր գործունեության բնագավառ է, հասարակական գիտակցության ձև, որի նպատակը իրականության մասին օբյեկտիվ գիտելիքների ձեռքբերումն ու տեսական համակարգումն է, այն ընդգրկում է ճանաչողական գործունեությունը և դրա արդյունքը [2]:

Մեկ այլ բնորոշմամբ. «Գիտությունը դիտարկվում է որպես մարդու կողմից իրականացվող ճանաչողական գործունեության հատուկ տեսակ՝ ուղղված բնության, հասարակության և մտածելակերպի վերաբերյալ օբյեկտիվ, համակարգված, հիմնավորված գիտելիքների ստացմանն ու վերաբրտադրմանը» [5]:

Մարդկային քաղաքակրթության զարգացման պատմական ընթացքը վկայում է, որ բնության և հասարակության նկատմամբ ճանաչողական ընկալումը մարդուն հնարավորություն է ընձեռել ստանալու որոշակի գիտելիքներ ու գործադրել իր կյանքի և անվտանգ ապահովության համար կոնկրետ գործողություններ՝ հավաքական աշխատանքից արտադրության անցնելու և ինքնապաշտպանության նպատակներով [2]: Ըստ Յու.Ն. Հարարիի՝ 12000 տարի առաջ տեղի է ունե-

ցել հողագործական հեղափոխություն՝ բույսերի մշակում, կենդանիների ընտելացում, անցում նստակեցության [4]:

Շրջակա միջավայրի և հասարակության վերաբերյալ գիտելիքների պաշարի կուտակմանը զուգընթաց մարդը դրանք դարձրել է տեխնոլոգիաներ, արտադրանքի տեսակներ, այդպիսով, գիտությունը գիտության համար հայեցակարգից անցում է կատարել գիտության՝ տեխնոլոգիաների և կրթության համար հայեցակարգին*։ Վերջինս գիտության նվաճումները նոր սերունդներին փոխանցելու առաքելություն է ստացել և պատրաստելու գործունեության ինքնուրույն բնագավառ դարձող գիտության և իր ու տնտեսության տարբեր ոլորտների համար բարձր որակավորման մասնագետներ:

Գիտության զարգացման արդյունքում դրա աշխարհաճանաչողության գործառնությունը զուգընթաց ձևավորվեց նոր գործառնությամբ՝ գիտության նվաճումների հիմքի վրա նորաստեղծությունը՝ նոր արտադրատեսակների և տեխնոլոգիաների ստեղծումն ու ներդրումը արտադրության մեջ: Այդպիսով, 19-րդ դարի կեսերից սկսվեցին միմյանց հաջորդող արդյունաբերական հեղափոխությունները, որոնցից յուրաքանչյուրը նշանավորում էր գիտության և տեխնոլոգիաների զարգացման որոշակի նվաճումներ, որոնք մարդկային քաղաքակրթության համար ունեցան պատմահեղափոխական նշանակություն: Դրանցից առաջինը Անգլիայում արդյունաբերական հեղափոխությունն էր, որը վերաբերում էր մանածագործության ասպարեզում ձեռքի աշխատանքից մեքենայականին անցմանը:

Դրան հաջորդեցին ստանդարտացումը, հոսքային գծերի արմատավորումը, ռոբոտային տեխնիկայի և արհեստական բանականության նվաճումների ներդրումը մարդկային գործունեության տարբեր ոլորտներ: Ի դեպ, եթե առաջին երեքը առնչվում էին մարդու մեխանիկական գործողությունների փոխարինմանը մեքենայականով, ապա վերջին երկուսը վերաբերում են մտավոր գործողությունների մասնակի փոխարինմանը արդի կատարելագործված տեխնիկական միջոցներով: Իր այդ գործառնությամբ գիտությունը դարձավ վճռորոշ գործոն տնտեսության զարգացման, հատկապես երկրի արտաքին անվտանգության ապահովման համար և պատահական-հավանական զարգացման ընթացքից վերաճեց ծրագրված ու նպատակային նշանակության գործունեության չափազանց կարևոր ոլորտի: Ըստ այդմ՝ այն, ունենալով մշտապես աճող հանրային պահանջարկ, դարձավ պետական, այ-

* Այդ գործընթացը սկիզբ է առել 17-րդ դարում, երբ Ֆ. Բեկոնն առաջարկեց միավորել գիտությունն ու տեխնոլոգիաները: 18-19-րդ դարերում դրանց կապը դարձավ անխզելի (տե՛ս Հարարի, նշվ. աշխ., էջ 318, 319):

նուհետև՝ հանրային կառավարման կարևոր օբյեկտ: Ավելին, գիտությունը դարձավ պետական քաղաքականության կարևորագույն նպատակներից մեկը: ՀՀ սահմանադրությամբ (հոդված 86.14) ամրագրված է, որ պետական քաղաքականության հիմնական նպատակներից է «հիմնարար և կիրառական գիտության զարգացումը» [4]:

Ռուսաստանի Դաշնության սահմանադրության մեջ 2020 թ. առաջին անգամ ներառվել է «գիտատեխնոլոգիական զարգացում» հասկացությունը (հոդված 114.1)՝ ընդգծելով գիտության և տեխնոլոգիաների կարևորությունն ու միասնությունը [7]:

2. Գիտության առաքելությունը և հիմնական ու հատուկ գործառույթները: Գիտություն-տնտեսություն-կրթություն փոխառնչությունները

Գիտության առաքելությունն է մարդկային քաղաքակրթության զարգացման բնաաշխարհագրական ու հասարակական բնույթի օրինաչափությունների բացահայտման, գիտելիքների պաշարի կուտակման, տեխնոլոգիական հասարակության համար բարձր որակավորման մասնագետների պատրաստման նախադրյալների ստեղծման հիման վրա կանխատեսել հանրային կյանքի տնտեսական, անվտանգային ու մշակութային զարգացման գերակայությունները և մշակել դրանց իրագործման կանոնակարգերը:

Այդ առաքելությունը կենսագործելու համար գիտական ու գիտատեխնիկական գործունեությունն ունի հետևյալ հատուկ, ըստ էության՝ կարևորագույն գործառույթները.

- *բնական ու հասարակական երևույթների առաջացման ու զարգացման ընթացքի հետազոտության հիման վրա հիմնավոր օրինաչափությունների բացահայտում և ձևավորում՝ որպես գիտական արդյունք կամ նոր գիտելիք,*
- *գիտական արդյունքների հիման վրա նոր արտադրատեսակների և տեխնոլոգիաների ստեղծում ու ներդրում արտադրության մեջ՝ իբրև նորաստեղծություն կամ նորամուծություն,*
- *նորաստեղծ գիտական տեսությունների (արդյունքների) հրապարակում՝ գիտելիքների կուտակման ու աշխարհաճանաչողության նպատակով սերունդներին փոխանցման ու կրթական համակարգի կազմակերպման համար,*
- *օժանդակել կրթական համակարգին բարձր որակավորման մասնագետների պատրաստման համար: Գիտության՝ իբրև համակարգի ձևավորման և կրթության լիարժեք կազ-*

մակերպման գործընթացներում դրանց միջև փոխառնչությունները դառնում են սիներգիկ, ինչը, սակայն, չի նշանակում, թե գիտության գլխավոր խնդիրը կրթության զարգացմանը նպաստելն է: Դա գիտության գործառնություններից մեկն է,

- ապահովել երկրի տնտեսության միջազգային մրցունակության շարունակական բարձրացումը՝ բարձր գիտատար արտադրանքի թողարկման համար տեխնոլոգիական նախադրյալների ստեղծմամբ, և այդպիսով նաև երաշխավորել արտաքին անվտանգությունը: Հզոր տնտեսություն և հզոր բանակ. աշխարհաքաղաքական արդի պայմաններում դրանք են հզոր պետություն և ամուր պետականություն ունենալու բաղադրիչները: Այս դեպքում էլ գիտության և տնտեսության կապը սիներգիկ է, որովհետև ամուր տնտեսությունն է գիտության կայուն և անհրաժեշտ ֆինանսավորման երաշխիքը,
- իբրև մտավոր մշակույթի ոլորտ՝ նպաստել հայրենի երկրի ու նրա ժողովրդի էական ներդրմանը մարդկային քաղաքակրթության վերելքի ասպարեզում:

Նշված հատուկ գործառնություններից բացի, գիտության և գիտատեխնիկական գործունեության կառավարմանը բնորոշ են նաև հետևյալ հիմնական գործառնությունները.

- հետազոտությունների գիտական ուղղությունների և գործունեության ծավալների ռազմավարական պլանավորում,
- գիտության կառավարման կազմակերպական կառուցվածքների ստեղծում,
- գիտաշխատողների աշխատանքի արդյունավետ խթանման համակարգի ներդրում,
- գիտաշխատողների և գիտական կազմակերպությունների գործունեության գնահատման ու վերահսկողության կառուցակարգի գործարկում:

Նշված հիմնական գործառնությունների գործադրման հիմնախնդիրները կլուսաբանվեն ստորև:

3. Գիտության պետական կարգավորումը

Ազատ շուկայական տնտեսության պայմաններում պետական կազմակերպությունների հետ մեկտեղ կարող են գործել նաև մասնավոր կառույցներ: Լայն առումով ոլորտի կառավարումը մակրոմակարդակում կրում է պետական կարգավորման բնույթ, ինչը չի բացառում

պետական կազմակերպությունների ուղղակի կառավարումը թե՛ մակրո և թե՛ միկրոմակարդակներում:

Գիտության պետական կարգավորումն սկսվում է օրենսդրական դաշտի ստեղծումից, գիտության զարգացման հիմնավոր ռազմավարության ընդունումից մակրո և միկրոմակարդակներում, կառավարման կազմակերպական կառուցվածքների կազմավորումից, բյուջետային ֆինանսավորումից և ավարտվում գիտական ու գիտատեխնիկական գործունեության վերահսկողությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ սահմանադրությամբ հիմնարար և կիրառական գիտության զարգացումը պետական քաղաքականության հիմնական նպատակներից է: Գիտատեխնիկական ու նորամուծական գործունեության կանոնակարգման համար ընդունվել են ՀՀ օրենքները «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» (05.12.2000 թ.), «ՀՀ ԳԱԱ մասին» (2011 թ.), «Արտոնագրերի մասին» (08.12.2004 թ.), «Արտոնագրային վճարների մասին» (22.12.2010 թ.), նորամուծական գործունեության զարգացման վերաբերյալ ընդունվել է փաստաթղթերի փաթեթ. ՀՀ կառավարությունը 20.01.2005 թ. հավանություն է տվել «ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգին» (28.09.2005 թ.), հաստատել է «ՀՀ ինովացիոն համակարգի ձևավորման 2005–2010 թթ. ծրագիրը» և այլն [6]:

Գիտության պետական կոմիտեն ստեղծվել է 2007 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ նախագահի հրամանագրով: 2010 թ. մայիսի 27-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը», որում իբրև գիտության առաքելություն ընդգծվում է «ձևավորել գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգ» [1]: Ռազմավարությամբ նաև նախատեսվում էր «ձևավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ՝ խթանելով մասնավոր բիզնեսի ներգրավումը դեպի գիտություն և ապահովել այդ գիտելիքների նպատակաուղղված ներդրումը կրթության և տնտեսության այս կամ այն ոլորտ», իսկ իբրև առաջին թիրախ նախատեսվում էր «գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի ձևավորում» [1]:

Վերը շարադրվածը վկայում է, որ իրավական և ռազմավարական փաստաթղթերի մշակման փուլում գիտությունը, տեխնոլոգիաները և նորաստեղծությունը դիտվել են որպես օրգանական ամբողջություն, ինչը, ցավոք, իրականություն չի դարձել, տիրապետել է գիտությունը՝ գիտության և կրթության համար հայեցակարգը: Իսկ տեխնոլոգիաների ստեղծումն ու գործադրումը, նորաստեղծությունը՝ իբրև գիտության


շարունակություն, մնացել են տեսլականի կարգավիճակում, գիտության պետական կոմիտեն դարձել է բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, որին վերապահված գործառույթների թվում բացակայում են երկրում տեխնոլոգիական և նորամուծական զարգացման խնդիրները («Գիտական գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 03.05.2023թ. լրացված տարբերակի 15.1 հոդված), մինչդեռ նույն օրենքի 15-րդ հոդվածում («ա» և «բ» ենթակետեր) գիտության պետական կառավարման խնդիրներից են «գիտական և բարձր տեխնոլոգիական ոլորտի աշխատանքների համակարգումը, գիտության և արտադրության միջև փոխշահավետ հարաբերությունների ստեղծմանն օժանդակելը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը նպաստելը»:

Անհայտ է, թե որ պետական մարմինն է պարտավոր զբաղվել գիտության նվաճումների կիրառման, տեխնոլոգիական զարգացման և նորաստեղծության կարևորագույն խնդիրներով:

Սակայն ակնհայտ է, որ մեր և ապագա ժամանակների հրամայականով հարկ էր ստեղծել գիտության և տեխնոլոգիաների նախարարություն (կամ պետական կոմիտե), որը պետք է պատասխանատվություն ունենա գիտության արդիական ուղղությունների զարգացման, դրանց նվաճումների ներդրման, նորաստեղծական գործունեության, ըստ այդմ՝ նաև տնտեսության գիտատարության և միջազգային մրցունակության էական բարձրացման, երկրի արտաքին անվտանգության ապահովման կարևոր հարցում: Ահա թե ինչու գիտության կառավարման բարեփոխման առաջին քայլը պետք է լինի պետական կառավարման նշված մարմնի ստեղծումը վերևում թվարկված արհեստական բանականության ժամանակաշրջանին հարիր լիազորություններով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգը ՀՀ գործադիր իշխանության կազմում կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարով, որտեղ կետագծերն արտացոլում են միայն գործառութային, ոչ թե վարչական ենթակայությունը:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգը
ՀՀ գործադիր իշխանության կազմում.



Գիտության կառավարման բարեփոխման հաջորդ ուղղություններն են մասին հաջորդիվ:

4. Գիտական գործունեության արդյունքների գնահատման չափանիշները

Կան մարդկային գործունեության տեսակներ, որոնց արդյունքները բազմաբնույթ նշանակություն ունեն, ինչի պատճառով դրանց միանշանակ գնահատումը գործնականում բարդ է: Գործունեության նման տեսակներից են արվեստի, գրականության, կրթության, նաև գիտության ոլորտները: Այս բնագավառներում գործադրվում են մարդկանց և կազմակերպությունների աշխատանքի արդյունքների գնահատման միմյանց լրացնող ցուցանիշներ՝ ընդհանուր գնահատական ստանալու նպատակով: Օրինակ, գիտահետազոտական գործունեության համար նման ցուցանիշներ են գիտաշխատողների թիվը, ֆինանսավորման ծավալը, գիտական հրապարակումների քանակական ցուցանիշները և այլն: Ակնհայտ է, որ դրանք անուղղակի ցուցանիշներ են, մինչդեռ գլխավորը ստացված գիտական արդյունքներն են, նոր գիտական գաղափարները, որոնց էությունը և նշանակությունը գնահատելը դժվար խնդիր են, բայց անլուծելի չէ: Հնարավոր լուծումները չափանիշների համակարգի կիրառության ոլորտում են, բայց դրանք պետք է լինեն նպատակային և նպաստեն գիտության ու տեխնոլոգիաների, նաև մշակույթի այնպիսի զարգացմանը, որը հանգեցնում է ոչ միայն

գիտության, այլ նաև տնտեսական, անվտանգային և կրթամշակութային առաջընթացի:

Մեր կարծիքով այդպիսի չափանիշներից են՝

- *գիտության ոլորտում սահմանված պետական պատվերի կատարումը,*
- *գիտահետազոտական աշխատանքի արդյունքների փորձագիտական հիմնավոր գնահատումը,*
- *միջազգային և հայրենական գիտական հրապարակումները:*

«Գիտական և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15ա հոդվածով պահանջվում է իբրև գիտության պետական կառավարման խնդիր «գիտական, գիտատեխնիկական, պետական և նպատակային ծրագրերի մշակումը, պետական պատվերի տեղադրումը»:

Օրենքի նշված պահանջի կատարումն առաջին հերթին հնարավորություն կընձեռի կապակցելու երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման և գիտատեխնիկական գործունեության ուղղությունները, ինչը նորաստեղծական զարգացման նախադրյալն է: Բացի այդ, տնտեսական ու գիտատեխնիկական ընդհանուր շահերով պայմանավորված պետական պատվերի կատարումը կդառնա գիտական կազմակերպությունների և առանձին գիտաշխատողների գործունեության գնահատման չափանիշ:

Գիտահետազոտական գործունեության շնորհիվ ստացվում են զանազան բարդ խնդիրների լուծման գիտական արդյունքներ, նոր օրինաչափություններ, նոր գիտելիքներ, որոնց հիմնավորվածությունը և գիտագործնական նշանակությունն ի վիճակի են գնահատելու մասնագետ-գիտնականները, գիտական խորհուրդները, փորձագիտական կառույցները: Հազիվ թե հիմնավոր է փորձագիտական գնահատումը ստորադասել որևէ գիտական հանդեսի խմբագրակազմի (հաճախ գործարար կառույցների) որոշմանը: Մանավանդ հաջորդ չափանիշը գիտական հրապարակումներն են, առաջին հերթին՝ միջազգային, սակայն նպատակահարմար չէ գիտական գործունեության հիմնական գնահատականը համարել միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում (հաճախ վճարովի) հրապարակումները:

Միջազգային տնտեսական մրցակցությունը գիտական հիմքով տեխնոլոգիաների մրցակցություն է, ինչն աշխարհաքաղաքական մերօրյա պայմաններում նաև դրսևորվում է ռազմական մրցակցության տեսքով: Ահա թե ինչու գիտական աշխատանքի արդյունքները միշտ չէ, որ հրապարակային են, հաճախ դրանք գաղտնի են, իսկ աշխարհում այդ պատճառով տարածում ունի «արդյունաբերական լրտեսութ-

յուն» կոչվող երևույթը: Ուստի միջազգային մրցակցությունում սեփական արտադրության տեխնոլոգիական շահերը ևս պահանջում են հաշվի առնել գիտահետազոտական նվաճումների անվտանգության ապահովման անհրաժեշտությունը:

Քանի որ գիտական գործունեության արդյունքների գնահատումն առնչվում է գիտաշխատողի ատեստավորման խնդրի հետ, ապա տեղին է հիշեցնել «գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում սահմանված հետևյալ պահանջը. «Ատեստավորումը նպատակ ունի գնահատելու գիտական աշխատողի մասնագիտական պատրաստակամության աստիճանը և նրա ստացած գիտական արդյունքները՝ գիտական աշխատողի համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին պարզելու համար» (հոդված 17.1): Օրենքում նկատելիորեն չեն կարևորվում միայն միջազգային գիտական հրապարակումները, այլ պահանջվում է հաշվի առնել ստացած գիտական արդյունքները և մասնագիտական պատրաստվածության աստիճանը, ինչն ավելի տրամաբանական է և նպատակային:

5. *Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման արդյունավետությունը*

Գիտահետազոտական աշխատանքի պետական ֆինանսավորումը տրամաբանական է իրականացնել հետևյալ սկզբունքներով.

- *գիտության պետական պատվերի չափով բյուջետային ֆինանսավորում, ինչը նպատակ ունի ապահովելու գիտության և բարձր տեխնոլոգիական հիմքով մրցունակ տնտեսության ու երկրի անվտանգ զարգացումը: Ֆինանսական այդ հատկացումները կարող են կազմել գիտության բյուջետային ֆինանսավորման 2/3 մասը,*
- *հաշվի առնելով, որ գիտահետազոտական աշխատանքն ազատ ստեղծագործական գործունեության տեսակներից է, և գիտաշխատողը պետք է ունենա նախընտրած հեռանկարային բնագավառում գործելու հնարավորություն, անհրաժեշտ են բյուջետային հատկացումներ դրամաշնորհային ծրագրերի իրագործման համար (բյուջետային ֆինանսավորման 1/3-ի չափով),*
- *քանի որ գիտությունը տեխնոլոգիական զարգացման գլխավոր գործոնն է, հարկ է գործադրել խրախուսական միջոցներ (հարկային արտոնություններ, ներդրումային հարկային վարկ և այլն)՝ գիտություն-արտադրություն կապն ամրապնդելու և աշխարհում լայնորեն կիրառվող գործարար կազմակերպություններին ներգրավելու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման ոլորտ,*

ակտիվացնելով գիտության հանդեպ պահանջարկը և նորաստեղծական գործունեությունը:

Գիտության ֆինանսավորման ներկայումս գործող բազային, նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման եղանակները գործում են ՀՀ անկախության հռչակման առաջին տարիներից (1992 թ.) և ուղղված էին երկրի գիտական ներուժի պահպանմանը: Սակայն պետական գույքի, հատկապես արդյունաբերական ձեռնարկությունների անարդյունավետ և ոչ նպատակային մասնավորեցումը հանգեցրել է հիմնականում գիտատար սարքաշինական, էլեկտրատեխնիկական, քիմիական արտադրությունների փոշիացման և գիտատեխնիկական ու տեխնոլոգիական պահանջարկի էական նվազեցման: 21-րդ դարում առանց բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ռազմարդյունաբերական համալիրի չի կարող լինել հզոր պետություն՝ մրցունակ տնտեսությամբ և արտաքին անվտանգությունը երաշխավորող զինված ուժերով: Գիտության պետական ֆինանսավորման ծավալը վերջին տարիներին էականորեն աճել է, ուստի հարկ է այն նպատակաուղղել առաջավոր տեխնոլոգիաների մշակման ու տնտեսության մեջ ներդրման կարևորագույն խնդիրների լուծմանը, որպեսզի ՀՀ-ում համախառն ներքին արդյունքի ծավալում բարձր գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը էականորեն՝ 5–6 անգամ ավելանա, 4–5-ից դառնալով առնվազն 20–25 տոկոս:

Բազային ֆինանսավորման գործող կարգի պայմաններում ֆինանսավորողը, որքան էլ որ զավեշտ է, հստակ չգիտի, թե ինչ արդյունք է ակնկալվում հատկացված միջոցների դիմաց: Օրինակ, կրթության ոլորտում սահմանվում է պետական պատվեր բակալավրիատի և մագիստրատուրայի որոշակի մասնագիտություններով ու թվով մասնագետների պատրաստման համար, գիտության ֆինանսավորման պարագայում խնդիրը կարող է լուծվել նույնպես պետական պատվերի սահմանմամբ: Այդ դեպքում գիտական ու տնտեսական (նաև անվտանգային) ռազմավարությունները կշաղկապվեն ու կդառնան սիներգիկ:

Գիտության բազային ֆինանսավորումը եռաբաղադրիչ է՝ հիմնարար և կարևորագույն նշանակության կիրառական հետազոտությունների իրականացում, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում, ինչպես նաև ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում (հոդված 23.4 ա): Պետական պատվերի սահմանումը վերաբերում է առաջին բաղադրիչին, քանի որ մյուս երկուսը հասցեական են ու որոշակի:

Գիտություն-արտադրություն սիներգիկ զարգացման նման ռազմավարության շնորհիվ գործարար կազմակերպությունները շահագրգռված կլինեն ապահովել գիտության համընդհանուր ֆինանսավորման 40–45 տոկոսը, ինչպես աշխարհի ցանկացած երկրում է:

6. ՀՀ ԳԱՄ-ն գիտության կառավարման բարեփոխման համատեքստում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 1943 թ. ստեղծվել է որպես ԽՍՀՄ ԳԱ մանրակերտ ՀԽՍՀ-ում: Այն չի ունեցել բժշկագիտության, ագրարային գիտության, մանկավարժության և հոգեբանության գերակա ուղղություններով բաժանմունքներ ու գիտական կազմակերպություններ, մինչդեռ ԽՍՀՄ-ում դրանք ներկայացված էին առանձին ակադեմիաներով:

Հայաստանում 1991 թ. անկախության հաստատումից հետո ակադեմիական գիտության առումով հարկ էր լուծել առնվազն երկու խնդիր՝

- *ամբողջացնել ակադեմիական հետազոտության շրջանակները՝ ներառելով վերը նշված խիստ կենսական գիտական ոլորտները,*
- *ակադեմիան դարձնել անկախ պետականության կառուցման ու հզորացման կարևոր դերակատար՝ գիտատեխնոլոգիական նվաճումներով և հիմնավոր խորհրդատվությամբ նպաստելով ոչ միայն գիտակրթական համակարգի զարգացմանը, այլև ակտիվ մասնակցելով հանրային կառավարման, ազգային անվտանգության ապահովման, ներքին ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրների գիտական մշակմանը: Դա նշանակում էր բարեփոխել ակադեմիական գիտության կառավարման հայեցակարգը համապատասխանեցնելով անկախ պետության շահերին, մասնավորապես՝ ազատ շուկայական տնտեսության տրամաբանությանը, ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարմանը՝ պետական կառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:*

«Լավ է ուշ, քան երբեք» սկզբունքով ներկայումս երկրի առջև ծառացած խնդիրների լուծման բանալին գիտությունն է, և այդ առումով ակադեմիական գիտության բովանդակային բարեփոխումներն այսօր էլ արդիական են:

Վերը նշված խնդիրներից առաջինի լուծումը համեմատաբար դյուրին է, ունի կազմակերպական բնույթ, որի համար կան գիտական ու կադրային նախադրյալներ:

Ակադեմիական գիտության բովանդակային բարեփոխման նպատակով անհրաժեշտ է՝

- ստանձնել պարտավորություններ պետական համապատասխան գերատեսչությունների հետ մշակելու երկրում գիտության ու տնտեսության զարգացման համակցված ռազմավարություն՝ հաշվի առնելով նաև անվտանգության ապահովման խնդիրները, և դրա հիման վրա ձևակերպել գիտատեխնիկական գործունեության պետական պատվերի նախագիծը և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը,
- գիտության և տեխնոլոգիաների զարգացման հիմնախնդիրների համակարգման պետական լիազոր մարմնի հետ գերակա մասնակցություն ունենալ պետական պատվերի տեղաբաշխմանը, կատարմանը և նորաստեղծական գործունեությանը,
- էականորեն ակտիվացնել ԳԱԱ գիտական կազմակերպությունների անմիջական մասնակցությունը երկրում կարևորագույն գիտատեխնոլոգիական խնդիրների լուծմանը և նորաստեղծական գործունեությանը՝ համագործակցելով համապատասխան գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ,
- ԳԱԱ համակարգում դարձնել սովորական աշխատանքային առօրյա գիտահետազոտական աշխատանքի հետ մեկտեղ և դրա արդյունքներով օժանդակել համապատասխան պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լուծելու երկրում օրենսդրական դաշտի ձևավորման, միջազգային հարաբերությունների ու քաղաքական հիմնախնդիրների գիտական մշակման, տնտեսական ու սոցիալական ծրագրերի հիմնավորման համար՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն նախապես սահմանված կարգով,
- հայագիտական հետազոտություններով նպաստել հայ մտավոր և նյութական մշակույթի պահպանմանը, զարգացմանն ու հանրահռչակմանը, մասնավորապես հայոց լեզվի ու հայ գրականության, հայոց պատմության, հայկական արվեստի բոլոր բնագավառների բազմակողմանի զարգացմանն ու ծավալմանը, այդպիսով՝ հայկական ինքնության, մեր պատմության ու մշակույթի՝ օտար ոտնձգություններից պաշտպանությանը:

«Ակադեմիական քաղաք» ծրագիրը, որը ներկայումս հանրահռչակվել է, մեր համոզմամբ, մեծ մասամբ վերաբերում է բարձրագույն կրթությանը, քանի որ այսօր գիտությունն ունի ուրույն խնդիրներ, որոնց մասին արդեն նշվել է: Ծրագրով նախատեսվող բուհերի խոշորացման, բուհական կրթության որակի էական բարձրացման, բուհական գիտության զարգացման խնդիրներն արդիական են և կարող են լուծվել բարձրագույն կրթության բարեփոխումների միջոցով: Արդյունքում կստեղծվեն կրթության ու գիտության ժամանակակից համակարգեր, որոնց միջև կծավալվի ավանդական համագործակցություն, բայց նաև մրցակցություն, ինչը կդառնա երկու ոլորտների զարգացման շարժիչ ուժերից մեկը:

Ակնհայտորեն գիտությունն ու կրթությունն ունեն զարգացման յուրօրինակ խնդիրներ, որոնք ավելի շատ վերաբերում են առանձին ոլորտների, քան ընդհանուր են, ուստի նպատակահարմար է դրանց գործունեության կարգավորման համար ընդունել ոչ թե ընդհանուր, այլ առանձին օրենսդրական ակտեր:

Եզրակացություններ

Քանի որ գիտության առաքելությունը ոչ միայն աշխարհաճանաչողությունն է, այլ նաև գիտության ստացած արդյունքներով բարձր տեխնոլոգիական զարգացման և երկրի անվտանգության ապահովումը, ապա հարկ է ստեղծել հանրային կառավարման մարմին՝ գիտության և տեխնոլոգիաների նախարարություն (պետական կոմիտե), որի կարևորագույն գործառնություններից են գիտության ու տեխնոլոգիական առաջընթացի համակարգումը և նորաստեղծությունը:

Գիտական ու գիտատեխնիկական գործունեության արդյունավետության բարձրացման ու սոցիալ-տնտեսական և անվտանգային խնդիրների համակցված լուծման նպատակներով անհրաժեշտ է կարևորել գիտության պետական պատվերի սահմանումը գիտական կազմակերպությունների համար՝ չբացառելով նաև դրամաշնորհային ծրագրերը՝ իբրև ազատ գիտական-ստեղծագործական գործունեության հնարավորություն, գիտաշխատողների և առանձին գիտական ստորաբաժանումների աշխատանքը գնահատել պետական պատվերի կատարման, գիտական արդյունքների, ինչպես նաև հայրենական և միջազգային գիտական հանդեսներում հրապարակումների չափանիշներով: Վերակառուցել գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համակարգը՝ այն նպատակամղելով գիտատեխնոլոգիական արդյունքների ստացմանը և նորաստեղծությանը: Ակադեմիական գիտությունը հարկ է դարձնել հայրենական պետականության հզորացման կարևոր դերակատար՝ գիտատեխնոլոգիական նվաճումներով և հիմնավոր խորհրդատվությամբ նպաստելով գիտակրթա-

կան համակարգի զարգացմանը, հանրային կառավարման, ներքին ու արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտական մշակմանը:

Գիտությունն ու կրթությունն առանձին համակարգեր են, ունեն առանձնահատուկ խնդիրներ, որոնք ավելի շատ ներհատուկ են, քան ընդհանուր, ուստի դրանց գործունեության օրենսդրական կարգավորումները նպատակահարմար է առանձնացնել, իսկ «ակադեմիական քաղաք» ծրագիրը կենտրոնացնել բուհական կրթության էական բարեփոխման խնդիրների նպատակասլաց լուծման ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
E-mail: suvryan@sci.am

Ակադեմիկոս Յու.Մ. Սուվարյան

Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման համակարգի բարեփոխման գերակայությունները

Գիտության առաքելության ամբողջական իրագործման նպատակով տրամաբանական է ՀՀ հանրային կառավարման համակարգում կազմակերպել գիտության և տեխնոլոգիաների նախարարություն (կամ պետական կոմիտե), որի առանցքային գործառնություններից է գիտահետազոտական գործունեության, տեխնոլոգիական զարգացման ու նորաստեղծության համակարգումը: Գիտության, տնտեսության և արտաքին անվտանգության ռազմավարությունների համակցված իրագործման համար անհրաժեշտ է գիտական կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգել պետական պատվերով: Ըստ այդմ՝ հիմնարար և կիրառական հետազոտությունների ֆինանսավորման ծավալի շուրջ $\frac{2}{3}$ -ը նպատակահարմար է հատկացնել գիտության պետական պատվերի կատարմանը, $\frac{1}{3}$ -ը՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործմանը: Էական է խրախուսական միջոցներ գործադրել՝ գործարար կառույցներին գիտատեխնիկական գործունեության մեջ ներգրավելու և ավելացնելու գիտության ֆինանսավորման ու նորաստեղծության հնարավորությունները:

Գիտական ստորաբաժանումների և գիտաշխատողների գործունեությունը կարող է գնահատվել պետական պատվերի կատարման, գիտական արդյունքների և միջազգային ու հայրենական գիտական հանդեսներում հրապարակումների չափանիշներով: Հայրենի երկրի գիտատեխնոլոգիական շահերը չի կարելի ստորադասել միջազգային հրապարակումներին:

Արդեն ավելի քան երկու դար է, որ սոցիալ-տնտեսական և անգամ աշխարհաքաղաքական խնդիրները լուծվում են գիտատեխնիկական գործունեության ստեղծած կարողություններով, ուստի անհրաժեշտ է բովանդակային առումով բարեփոխել ակադեմիական գիտությունը և դարձնել հայկական պետականության ամրապնդման և զարգացման կարևոր դերակատար հանրային կառավարման համակարգում:

Հաշվի առնելով, որ գիտությունն ու կրթությունն ունեն ներհատուկ և յուրօրինակ խնդիրներ, ապա նպատակահարմար է դրանց գործունեությունը կարգավորել առանձին օրենսդրական ակտերով:

Академик Ю.М. Суварян

Приоритеты реформирования системы управления научной и научно-технической деятельностью

Для полноценной реализации миссии науки логично организовать в системе государственного управления Республики Армения Министерство науки и технологий (или государственный комитет), одной из основных функций которого явится координация научно-исследовательской деятельности, технологического развития и инноваций. Для комплексной реализации стратегий развития науки, экономики и внешней безопасности необходимо регулирование деятельности научных организаций государственным заказом. Соответственно, целесообразно около 2/3 финансирования фундаментальных и прикладных исследований направить на выполнение государственного заказа по науке, а 1/3 — на реализацию грантовых программ. Необходимо внедрять стимулы для вовлечения субъектов предпринимательства в научно-техническую деятельность, расширять возможности финансирования науки и инноваций.

Деятельность научных подразделений и научных сотрудников может оцениваться по критериям выполнения государственных заказов, научных результатов, публикаций в международных и отечественных научных журналах. Научно-технологические интересы родной страны невозможно подчинять международным публикациям.

На протяжении более двух столетий социально-экономические и даже геополитические проблемы решались за счет возможностей, созданных научно-технической деятельностью, поэтому необходимо реформировать академическую науку в содержательном плане и сделать ее важным исполнителем в укреплении и развитии армянской государственности в системе общественного управления.

Учитывая, что наука и образование имеют присущие им уникальные проблемы, целесообразно регламентировать их деятельность отдельными законодательными актами.

Academician Yu. M. Suvaryan

Priorities of Reforming the System of Management of Scientific and Technical Activities

For the purpose of full implementation of the mission of science, it is logical to organize a Ministry of Science and Technology (or a State Committee) in the public administration system of the Republic of Armenia, one of the key functions of which is the coordination of scientific research activities, technological development and innovation. For the combined implementation of science, economy and external security strategies, it is necessary to regulate the activities of scientific organizations by state order. Accordingly, it is advisable to allocate about 2/3 of the volume of financing for fundamental and applied research to the implementation of the state order for science, 1/3 to the implementation of grant programs. It is essential to implement incentive measures to involve business structures in scientific and technical activities and increase the opportunities for financing science and innovation.

The activities of scientific departments and researchers can be assessed by the criteria of state order fulfillment, scientific results, and publications in international and domestic scientific journals. The scientific and technological interests of the homeland cannot be subordinated to international publications.

For more than two centuries, socio-economic and even geopolitical problems have been solved by the capabilities created by scientific and technical activities, therefore it is necessary to reform academic science in terms of content and make it an important player in the strengthening and developing Armenian statehood in the public administration system.

Considering that science and education have inherent and unique problems, it is expedient to regulate their activities with separate legislative acts.

Գրականություն

1. «Գիտության պետական կոմիտե. հրապարակումներ և իրավական ակտեր», Ե., «Ճարտարապետ», 2015, 492 էջ:
2. Հայկական սովետական հանրագիտարան, Ե., հ. 3, 1977, 720 էջ:
3. Հայրապետի Յու.Ն., Sapiens: Մարդկության համառոտ պատմություն, Ե., New mag, 2020, 512 էջ:
4. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., Պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ, 2019, 96 էջ:
5. Ծոդուկյան Ա., Մխիթարյան Ա. Գիտության կազմակերպում և կառավարում, Ե., Գիտություն, 2025, 150 էջ:
6. Մուխադյան Յու. Մ., Տնտեսություն, գիտություն, կրթություն, Ե., «Գիտություն», 2014, 370 էջ:
7. Криворучко В.В. О сепарации научной деятельности и госкорпоративной форме управления наукой в современной России. Управление наукой: теория и практика, 2024, т. 6, №1, стр. 13–31.

ՔԻՄԻԱ

ՀՏԴ 65(072):378,21

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-28

**ՄԳՂ, պրոֆեսոր, ՀՄՀԳԱ ակադեմիկոս Լ.Ա. Սահակյան,
Հ.Հ. Խաչատրյան, Խ.Ռ. Ավետիսյան**

**Մասնագիտական կրթության հիմնախնդիրները՝ որպես
ճանաչողության ժամանակակից տեսության ճգնաժամի
արտացոլում**

(Ներկայացված է 7/IV 2025)

Բանալի բառեր. *մասնագիտություն, քոլեջ, համալսարան, ուսանողներ, գործատուներ, զբաղվածության ընկալում, կրթական հաջողություն, «կարծիքի եռանկյունի»:*

Ուսումնասիրության առարկան Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի դեղագիտության ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերի, ինչպես նաև քոլեջի ուսանողներն են:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ուսանողների ապագա մասնագիտության և աշխատանքային ուղու վերաբերյալ պատկերացումների ազդեցությունն իրենց կրթական և աշխատանքային գործունեության վրա, գնահատել այդ գաղափարների համապատասխանությունը ծնողների և գործատուների կարծիքներին, ինչպես նաև ուսումնասիրել գործատուների և ծնողների կարծիքը ուսանող երիտասարդների աշխատանքի հեռանկարների, հնարավորությունների և ակնկալվող խոչընդոտների մասին:

Խնդիրն անհամապատասխանությունն է երիտասարդների ցանկությունների, ապագա աշխատանքային գործունեության մասին պատկերացումների և մասնագիտության ընտրության միջև:

Մեթոդը: Հոդվածի էմպիրիկ հիմքը բուհի և միջին մասնագիտական կրթության ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքներն են, զրույցը դասախոսների, ուսանողների և գործատուների հետ, քիմիական մնացորդային գիտելիքների և յուրացման մակարդակի:

կի ստուգման արդյունքները և դրանց վերլուծությունը: Վերլուծությունը հիմնված է Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և քոլեջի դեղագիտության ֆակուլտետների ուսանողների զանգվածային հարցման արդյունքների և գործատուների հետ հարցազրույցների վրա (գործատուների կարծիքները երիտասարդ մասնագետների մասին և նրանց պահանջները):

Ուսանողների պատկերացումներն իրենց հետագա մասնագիտական և աշխատանքային գործունեության մասին դիտարկվում են նրանց ներկայիս կրթական կյանքի համատեքստում (կրթական հաջողությունների հասնելը, ուսման և աշխատանքի համատեղումը, կրթության և աշխատանքի հետագա հեռանկարները):

Կարևոր տարր է գործատուների ընկալումը քոլեջների և բուհերի շրջանավարտների մասնագիտական և աշխատանքային ոլորտում հաջողության չհասնելու գործոնների վերաբերյալ: Նրանց կարծիքով կրթական գործունեության և աշխատանքի միջև գոյություն ունի ոչ գծային կապ: Ավանդաբար բուհ կամ քոլեջ ավարտելու իրավիճակը դիտարկվում է բացառապես շրջանավարտների զբաղվածության խնդրի համատեքստում:

Այնուամենայնիվ, բազմաթիվ երիտասարդներ ստիպված են լինում միանգամից մի քանի ընտրություն կատարել՝ բնակության վայր, ընտանեկան և ամուսնական հարաբերություններ, կարիերայի ծրագրեր: Շրջանավարտների զբաղվածության խնդիրն ընկղմված է հարցերի, հակասությունների և դժվար որոշումների մեջ, որոնք բխում են կրթական դիպլոմի «բեռից»: Միննույն ժամանակ զբաղվածությունը մնում է քոլեջների և բուհերի շրջանավարտների հետկրթական կյանքի առանցքը, որը բնութագրվում է մասնագիտական աշխատանքային գործունեության գերակայությամբ: Այս իրավիճակում, բացի երիտասարդներից, ներգրավված են նաև նրանց ծնողներն ու գործատուները: Այս «եռանկյունում» յուրաքանչյուր օղակի ակնկալիքների և գաղափարների խաչմերուկը ստեղծում է հետկրթական կյանքի ռազմավարության շրջանակ՝ իդեալական ներդաշնակ, բայց իրականում հաճախ հակասական և խճանկարային:

Ժամանակակից կրթությունը բնութագրվում է մեծաքանակ տեղեկատվական բովանդակությամբ: Բնագիտական առարկաները լցված են մեծ քանակությամբ տեսական և փաստացի տեղեկություններով, որոնք աշակերտը պետք է սովորի: Այս առումով ուսուցիչները ստիպված են լինում օգտագործել հիմնականում վերաբուսողական մեթոդներ, քանի որ հաճախ ժամանակ չի լինում խնդրահարույց ուսուցում օգտագործելու համար: Արդյունքում, ինչպես նշում է Վ.Վ. Դավիդովը, վերջին տասնամյակներում մեր երկրում իրականացված հոգե-

բանական և մանկավարժական հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ կրթությունը չի ապահովում սովորողների պատշաճ զարգացումը [2]: Ուսուցիչներն այս իրավիճակից ելքը տեսնում են աշակերտների ճանաչողական կարողությունների զարգացման համար պայմաններ ստեղծելու մեջ: Այսպես, Եվրոպական մշակութային հիմնադրամի (Ամստերդամ) կողմից պատրաստված «21-րդ դարի կրթված մարդ» նախագծի առաջին կետում ասվում է, որ «ծրագրերի ընդլայնման և ուսուցման երկարացման ներկայիս միտումների փոխարեն» անհրաժեշտություն է անձի զարգացումը, ուսանողներին սովորեցնել ճանաչողության միջոցները, որոնք ներառում են նաև ստեղծագործելը:

Պատանի տարիքում ձևավորվում է որոշակի արժեքային համակարգ, որի հիման վրա ավագ դպրոցի պատանիները սկսում են այս կամ այն չափով գնահատել իրենց կյանքի հեռանկարները: Այդ արժեքային համակարգից է կախված, թե ինչ միջոցներ պետք է ընտրվեն ընդհանուր և մասնավոր նպատակներին ըստ էության հասնելու համար, որոնք ձևավորվում են՝ հաշվի առնելով նրանց հետագա ուսուցումը բուհում շարունակելու հնարավորությունը:

Կրթությունը պահպանողական և իներտ համակարգ է, հետևաբար՝ նույնիսկ ԽՍՀՄ փլուզումից հետո քիմիան և քիմիական կրթությունը, որոնք ծանր ֆինանսական կորուստներ կրեցին, շարունակեցին կատարել իրենց առջև դրված խնդիրները: Նույնիսկ 90-ականների մութ ու ցուրտ տարիներին երկու անգամ Հայաստանում անցկացվեց միջազգային Մենդելեևյան օլիմպիադան, որին մասնակցում էր 74 երկիր: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում սկսվեցին կրթության համակարգի բարեփոխումները, որոնց հիմնական նպատակը գլոբալացված աշխարհում նոր սերունդների մուտքի աջակցությունն է: Դրա համար, ըստ բարեփոխումների հեղինակների, կրթության բովանդակության կենտրոնական տեղը պետք է գրավեն հաղորդակցությունը, համակարգչային գիտությունը, օտար լեզուները և միջմշակութային դասընթացները: Ինչպես տեսնում ենք, բնական գիտությունների համար այս բարեփոխումներում տեղ չկա [4]:

Քիմիական կրթության և դեղագիտության ոլորտում առկա ճգնաժամի պատճառները բացահայտելու և դրանից դուրս գալու ուղիներ փնտրելու նպատակով որոշեցինք սոցիոլոգիական հարցումների, հարցազրույցների և զրույցների միջոցով գտնել հետևյալ հարցերի պատասխանները:

1. Ինչո՞ւ ուսանողները չեն ուզում սովորել դեղագիտական ֆակուլտետում և առաջին կուրսն ավարտելուց հետո փոխում են ֆակուլտետը:

2. Ինչո՞ւ դեղագիտական ֆակուլտետ են դիմում սակավաթիվ ուսանողներ:

3. Ինչո՞ւ նույնիսկ քոլեջի դեղագիտական ֆակուլտետում սովորել ցանկացող աշակերտները սակավաթիվ են:

Այս հարցերի պատասխանները ձևավորվեցին սովորողների սոցիոլոգիական հարցման պատասխանները, գործատուների, դասախոսների և ծնողների կարծիքները վերլուծության ենթարկելուց հետո: Նշված հարցերի պատասխաններում սովորողների մեծամասնությունը պատճառաբանել են. քիմիայի դասընթացը բավականին ծավալուն է և դժվարընկալելի առաջին կուրսի ուսանողների համար: Ի տարբերություն ընդհանուր բժշկության և ատամնաբուժական ֆակուլտետների, որտեղ քիմիան դասավանդվում է մեկ կիսամյակ [6], դեղագիտական ֆակուլտետում դասավանդվում է 4 կիսամյակ և տարբեր դասընթացներ (ընդհանուր և անօրգանական, օրգանական, հետերոցիկլեր, անալիտիկ, ֆիզիկական և կոլոիդային քիմիա):

ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում, ինչպես նաև քոլեջում «Քիմիա» առարկան դասավանդող դասախոսների կարծիքը ուսանողների մասին: Նրանք ցավով նշում են, որ առաջին կուրսի ուսանողները դպրոցից գալիս են քիմիայից հիմնականում անբավարար պատրաստվածություն ունենալով, հավանաբար դպրոցում քիմիային հատկացված ժամանակի զգալի կրճատման, ինչպես նաև պետական միասնական քննության ներդրման պատճառով: Սա հանգեցրել է նրան, որ դպրոցի շրջանավարտները չեն տիրապետում այս գիտության հիմունքներին, հիմնարար պատկերացում չունեն այս գիտության մասին: Բժշկական բուհերում քիմիայի ուսումնական ծրագրի կառուցվածքի առանձնահատկությունն այն գիտելիքների վրա հիմնված լինելն է, որը ուսանողները պետք է ձեռք բերեն դպրոցում սովորելիս: Այսպիսով, առաջին կուրսի բազմաթիվ ուսանողներ չեն կարող նույնիսկ ձևակերպել բնության ամենակարևոր հիմնարար օրենքները (Դ.Ի. Մենդելեևի պարբերական օրենքը, զանգվածի և էներգիայի պահպանման օրենքը), չգիտեն ինչպես լուծել ամենապարզ քիմիական խնդիրները, պատկերացում չունեն անօրգանական և օրգանական միացությունների հիմնական դասերի հետ կապված նյութերի քիմիական հատկությունների մասին: Այս գիտելիքներով և կլիպային մտածողության պատճառով նրանք դժվարությամբ են փորձում առանձին բառեր շարել՝ իրենց մտքերը հստակ արտահայտելու համար:

Գործատուների կարծիքը երիտասարդ մասնագետների մասին:

Վերջին տարիների ընթացքում ուսումնական հաստատությունների շրջանավարտների ընտրության դժվարին իրավիճակը սրվել էր վերլուծաբանների տագնապալի կանխատեսումներով կապված

COVID-սերնդի հետ: Համալսարանի և քոլեջի շրջանավարտները հայտնվել են ծայրահեղ խոցելի վիճակում: Համաճարակն առաջացրել է շուկայի կառուցվածքային վերափոխում՝ կապված բժշկական ապրանքների, դեղերի, հեռահար բժշկական ծառայությունների, արտադրության և վաճառքի ընդլայնման, առցանց կրթության զարգացման, սննդի և առաջին անհրաժեշտության ապրանքների առաքման ոլորտի հետ: Այս իրավիճակում հաղթել է երիտասարդության որոշակի հատված: Բայց ամենից շատ այն պահանջարկ է դարձել աշխատաշուկայի երկրորդական հատվածում, որն աճել է առաքիչների և վարորդների թափուր աշխատատեղերի, այսինքն՝ ցածր որակավորում ունեցող աշխատատեղերի պահանջարկի պատճառով [1]:

Ծնողների կարծիքը:

Այսօրվա երիտասարդները հիմնականում ինքնուրույն են որոշումներ կայացնում:

Չեն ուզում, որ իրենց երեխան դեղ վաճառող դառնա:

Չգիտեն, թե որտեղ են աշխատելու նորավարտ մասնագետները բուհը կամ քոլեջն ավարտելուց հետո:


Հարցազրույցի նյութերում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ծնողների պատկերացումները քոլեջներում ուսանողների կրթության մասին: Ահա այս հարցի վերաբերյալ ծնողների բնորոշ կարծիքը. երեխաները, ովքեր իններորդ դասարանից հետո գնում են քոլեջ, չեն հարցնում՝ ինչու են իրենց այնտեղ ուղարկել: Որպես կանոն, նրանց կարգավիճակը փոխվում է: Նրանց հետ սկսում են այլ կերպ շփվել: Քոլեջում ավելի շատ անձնական պատասխանատվություն կա, քանի որ ոչ ոք այլևս չի ծաղրում նրանց: Այնտեղ ուսումնական ծրագիրն ավելի հեշտ է, քան դպրոցում: Միանգամից աճում է նրանց ինքնավստահությունը, և նրանք հասկանում են, որ շուտով կարող են աշխատանքի անցնել: Դա հնարավորություն կտա լինելու ավելի անկախ, ապահով կյանքում և, հավանաբար, ինչ-որ կերպ օգնելու ծնողներին:

Ուսանողների սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ դեղագիտական ֆակուլտետ ընդունված ուսանողների 70-80 %-ը չեն ընտրել դեղագետի մասնագիտությունը, նրանք դիմել են ընդհանուր բժշկության կամ ատամնաբուժական ֆակուլտետներ, մրցույթը չեն հաղթահարել, երկրորդ հայտով ընդունվել են դեղագիտության ֆակուլտետ՝ առաջին կուրսն ավարտելուց հետո համապատասխան ֆակուլտետ տեղափոխվելու ակնկալիքով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իսկապես դեղագիտական ֆակուլտետի ուսանողների 70 տոկոսից ավելին առաջին կուրսը վերջացնելուց հետո տեղափոխվել են համապատասխան ֆակուլտետներ: Դեղագիտական ֆակուլտետում մնացել են ուսանողների 30 տոկոսը:

Աղյուսակ

Միջին ռեսուրսային ծախսերի մասնագիտությունը

№	Մասնագիտության ընտրության շարժառիթը	Այո (%)	Ոչ (%)	Չգիտեմ
1.	Ընտրել եմ բժշկի մասնագիտությունը, բայց մրցույթը չեմ հաղթահարել, երկրորդ հայտով ընդունվել եմ դեղագիտական ֆակուլտետ	70	30	
2.	Ընտրել եմ դեղագործի մասնագիտությունը	30	60	10
3.	Կատարել եմ ծնողների ցանկությունը	40	50	10
4.	Հետևել եմ ընկերոջս խորհրդին	15	55	30
5.	Պատահական ընտրություն եմ կատարել	5	90	5



Նկ. 1. ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների հարցման արդյունքները

Պարզվեց, որ մնացած 30%-ը ընդունվել է դեղագիտական ֆակուլտետ, բայց կյանքի նախագիծ չունի, չգիտի՝ ինչ է անելու «Դեղագետի» դիպլոմն ստանալուց հետո: Այդ պատասխանն անհանգստացնող էր, և մենք որոշեցինք ուսումնասիրել աշխատանքային շուկան: Պարզվեց, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են բազմաթիվ աշխատատեղեր:

Դեղագիտության ոլորտի մասնագետները կարող են աշխատել ստորև բերված աշխատավայրերում.

1. դեղերի արտադրությունում,
2. դեղերի գործարանների որակի հսկման անալիտիկ լաբորատորիաներում,
3. կոմերցիոն լաբորատորիաներում,
4. «ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-ի լաբորատորիայում,
5. «ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-ի գրանցման բաժնում,
6. դեղագործական կազմակերպությունների ներկայացուցչություններում,
7. պայմանագրային հետազոտական կազմակերպությունների (CRO, Contract Research Organization) հետևյալ բաժիններում.
 - *դեղերի գրանցման բաժին (գրանցումը հիմնականում իրականացվում է ԱՄՆ-ի և Եվրամիության համապատասխան վերահսկողական մարմիններում),*
 - *կլինիկական հետազոտությունների բաժին,*
 - *կլինիկական հետազոտությունների տվյալների վերլուծության բաժին,*
 - *դեղագոյություն (դեղերի հետգրանցումային անվտանգության հսկողության) բաժին,*
8. գիտահետազոտական լաբորատորիաներ,
9. նոր դեղերի հայտնաբերմանն ուղղված հետազոտություններ իրականացնող կազմակերպություններում՝ գույակցված ծրագրավորման և տվյալագիտության հետ,
10. դեղատներում,
11. դեղատնային ցանցերում,
12. դեղերի ներմուծում իրականացնող կազմակերպություններում,
13. մատակարարման բաժնում՝ դեղերի պահեստներում:

Դեղագիտական ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսի ուսանողներին աշխատատեղերի ցուցակը ներկայացնելիս պարզվեց, որ ուսանողները տեղյակ էին միայն դեղատնային աշխատանքից: Հասկանալի է, որ դպրոցն ավարտող երիտասարդները և նրանց ծնողները հիմնականում տեղեկացված չեն, և հանրայնացման անհրաժեշտություն կա:

Հարցեր թեմայի վերաբերյալ

Ի՞նչ աշխատանք կարող է ստանալ երիտասարդը դեղագործական ֆակուլտետն ավարտելուց հետո:

Շրջանավարտները կարող են աշխատել որպես դեղագործ և քիմիկոս: Նրանք պահանջարկ ունեն նաև բժշկական դեղամիջոցներ արտադրող ընկերությունների բոլոր պաշտոնների համար: Պահանջվում են դեղագործներ դեղերի արտադրության լաբորատորիաներում, որակի բաժնում, մարքեթինգի բաժնում՝ ընկերության արտադրանքը գովազդելու համար:

Որտե՞ղ կարող եք աշխատանքի ընդունվել դեղագործի կրթությամբ:

Դեղագործի կոչումով դուք կարող եք որոշել ձեր ապագա գործունեությունը բազմաթիվ ոլորտներում՝ դեղագործական ընկերությունում, բժշկական լաբորատորիայում, գիտական հետազոտությունների ոլորտում: Բայց ամենահայտնի ուղղությունը դեղատներն են, որտեղ տարիներ շարունակ լավ մասնագետների պակաս կա:

Աշխատել դեղատանը: Շատ բան կախված է դեղագործից, ով ամեն օր հանդիպում է հիվանդներին դեղատանը և շփվում նրանց հետ: Պարզ առաջադրանքները, որոնք պահանջում են միայն անհրաժեշտ դեղամիջոցի տրամադրում, հազվադեպ են: Ամենից հաճախ դեղատան այցելուները որակյալ խորհրդատվության, առաջարկությունների, բժշկի դեղատոմսերի հարցում օգնության և պարզապես մարդկային վերաբերմունքի կարիք ունեն: Դեղագործը պետք է պատրաստ լինի լուծելու ցանկացած խնդիր, որքան էլ այն դժվար լինի՝ միաժամանակ մնալով քաղաքավարի և բարյացակամ:

Զարմանալի չէ, որ դեղագործի մասնագիտությունը համարվում է ոչ միայն պատվաբեր, այլև շատ դժվար: Երկարատև (և երբեմն գիշերային) հերթափոխերը, «դժվար» հաճախորդները և ուշադրություն պահանջող բարդ առաջադրանքների մի ամբողջ շարք դեղագործներից պահանջում են լինել ճկուն, սթրեսակայուն և էմոցիոնալ կայուն: Ի վերջո, մարդկանց կյանքն ու առողջությունը հաճախ կախված են նրանց որոշումներից:

Կարո՞ղ է բժշկական կրթություն ունեցող մասնագետը դեղագործ աշխատել:

Ո՛չ: Ատամնաբույժը չի կարող դեղագործ աշխատել:

Ի՞նչ անել

Այսօր քիմիայով հետաքրքրվող դպրոցականները շատ քիչ են: Տասնմեկերորդ դասարանցիների մոտ 10–12 %-ը հանձնում է միասնական պետական քննություն քիմիայից (նրանք հիմնականում այն շրջանավարտներն են, ովքեր նպատակ ունեն ընդունվելու բժշկական բուհեր), [3]: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ունենալ երկու տեսակի դասագրքեր՝ մեկը դպրոցականների 90%-ի համար, իսկ մյուսը՝ առարկայի խոր ուսումնասիրության համար:

Առաջնահերթ խնդիրներից է տարբեր մակարդակներում կրթական ծրագրերի թարմացումը՝ ուսուցման տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ: Կարևոր խնդիրներն են՝ հիմնական նվազագույնի բովանդակության ընտրությունը, դպրոցական քիմիայի և քիմիայի այն դասընթացի փոխհարաբերությունը, որն անհրաժեշտ է պրոֆիլային կենսաբժշկական ուղղվածությանը:

Անհրաժեշտ է բարեփոխել դասավանդման կատեգորիաները, սկզբունքներն ու օրինաչափությունները. սովորողների մեջ ձևավորել որոշակի աշխարհայացք, ստեղծել մանկավարժական նոր տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան ուսուցումն անցկացնել միջազգային կրթական տարածքի մակարդակով: Ուստի «**դպրոց-համալսարան**» համալիր ստեղծելու գաղափարը պետք է կյանքի կոչվի՝ միջնակարգ դպրոցներում բացելով մասնագիտացված բժշկական դասարաններ: Այս մասնագիտացված դասարանների առաջնահերթ խնդիրը պետք է լինի առարկայի խոր և համապարփակ ուսումնասիրությունը՝ աշակերտներին նախապատրաստելու համար ոչ միայն քիմիայի ավարտական քննությունը հաջողությամբ հանձնելուն, այլ նաև ընդլայնելու այն գիտելիքները, որոնք կօգնեն նրանց համալսարանում [5]:

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
E-mail: Lidasakyan7@gmail.com

Լ.Ա. Սահակյան, Հ.Հ. Խաչատրյան, Խ.Ռ. Ավետիսյան

**Մասնագիտական կրթության հիմնախնդիրները՝ որպես
ձանաչողության ժամանակակից տեսության ճգնաժամի
արտացոլում**

Վերջին տարիներին կրթության արդիականացման խնդիրը գրավում է ավելի մեծ ուշադրություն, որի հիմնական ուղղությունը կրթության բովանդակության և տեխնոլոգիաների կատարելագործումն է: Առաջնային խնդիրներից մեկը տարբեր մակարդակներում կրթական ծրագրերի նորացումն է՝ դասավանդման բազմազան մեթոդաբանությունների ներդրմամբ:

Միջազգային կրթական ոլորտում շարունակվում է գիտամանկավարժական գաղափարների և կրթադաստիարակչական ռազմավարությունների մշտական որոնումը, ինչը պահանջում է վերափոխել դասավանդման առկա կատեգորիաները, սկզբունքներն ու մոդելները, ուսանողների մոտ ձևավորել ամբողջական աշխարհայացք և ստեղծել

նոր մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնք կհամապատասխանեն միջազգային կրթական ստանդարտներին:

Այս խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ստեղծել «դպրոց-համալսարան» համալիր՝ հանրակրթական դպրոցներում մասնագիտացված բժշկական դասարանների բացմամբ: Այս դասարանների հիմնական խնդիրն առարկաների, մասնավորապես քիմիայի, խորացված և բազմակողմանի ուսումնասիրությունն է՝ նպատակ ունենալով նախապատրաստել շրջանավարտներին ոչ միայն ավարտական քննությունների հաջող հանձնմանը, այլև բարձրագույն կրթական ծրագրի արդյունավետ յուրացմանը:

Այս գործընթացում կարևոր խնդիրներից են ուսումնական բազային նվազագույնի բովանդակության սահմանումը և կրթական նպատակների շարունակականության ապահովումը կրթության բոլոր փուլերում:

Л.А. Саакян, Г.Г. Хачатрян, Х.Р. Аветисян

Проблемы профессионального образования как результат кризиса современной теории познания

В последние годы большое внимание уделяется проблеме модернизации образования, основным направлением которой явится совершенствование содержания и технологий обучения. Среди приоритетных задач – обновление образовательных программ разного уровня с использованием различных методик обучения.

В международном образовательном пространстве невозможно прекратить поиск научно-педагогических идей и образовательных стратегий, поэтому необходимо реформировать категории, принципы и закономерности в обучении, формировать у учащихся определенное мировоззрение, создавать новые педагогические технологии, которые позволят вести обучение на уровне международного образовательного пространства.

Поэтому возникла идея создания комплекса «школа–университет» с открытием специализированных медицинских классов в средних учебных заведениях. Первостепенной задачей создания данных специализированных классов является углубленное и всестороннее изучение предмета с целью подготовки выпускников этих классов не только к успешной сдаче итогового экзамена по химии, но и к формированию знаний, которые пригодятся им в вузе. Важными вопросами являются: проблема отбора содержания базового минимума, взаимосвязь школьной химии и химии, имеющей профильную медико-биологическую направленность.

L.A. Saakyan, G.G. Khachatryan, Kh.R. Avetisyan

Problems of Professional Education as a Result of the Crisis of Modern Theory of Knowledge

Annotation. In recent years, much attention has been paid to the problem of modernization of education, where the main direction is the improvement of the content and technology of education. Among the priority tasks is the renewal of educational programs at different levels using different methods of teaching.

In the international educational space it is impossible to stop searching for scientific and pedagogical ideas and educational and strategies, therefore, it is necessary to reform the categories, principles and patterns in teaching; to form a certain worldview in students; to create new pedagogical technologies that will allow to conduct training at the level of the international educational space. Therefore, an idea of creating a “school-university” complex, with opening specialized medical classes in secondary schools arose. The primary objective of creating these specialized classes is in-depth and comprehensive study of the subject in order to prepare graduates of these classes not only for passing the final examination in chemistry, but also for developing knowledge that will help them at the university. Important issues are: the problem of selecting the content of the basic minimum, the relationship between school chemistry and chemistry with a special medical and biological focus.

Գրականություն

1. *Амбарова П.А., Зборовский Г.Е.* Что ждет студентов после... Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены. 2022, № 3, с. 67–91. <https://doi.org/10.14515/monitoring.2022.3.2142>.
2. *Давыдов В.В.* Теория развивающего обучения. М.: ИНТОР, 1996, 542 с.
3. *Лисичкин Г.В.* Кризис школьной химии и возможный путь его преодоления. Вестник МГУ, Сер.20. Педагогическое образование, 2017, № 4, с. 62–70.
4. *Саакян Л.А.* Современное состояние химического образования в Республике Армения. Современные тенденции развития химического образования от школы к вузу, Душамбе-Москва, 2006, с. 16–22.
5. *Хофман Р.* Особый химический взгляд. Химия и жизнь, 2011, № 9, с. 15–18.
6. *Яроватая М.А., Королёва И.П.* Специфика преподавания химии студентам медицинского вуза в рамках нового образовательного стандарта. Международный журнал экспериментального образования. 2012, № 4–2, с. 292–294.

ՀՏԴ 615.322+635.46

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-39

Ա.Ս. Սահակյան

Գանգուր ավելուկի սերմերում ճարպաթթուների քիմիական կազմի ուսումնասիրությունը

(Ներկայացված է ՀՄՀԳԱ ակադեմիկոս Ա.Ս. Սահակյանի կողմից 23/V 2025)

Բանալի բառեր. դեղաբույս, Գանգուր ավելուկ, ճարպաթթուներ, էսթերացում, քրոմատագրում:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն են դարձնում դեղաբույսերից ստացված թուրմերի քիմիական բաղադրության, ինչպես նաև բժշկության մեջ դրանց կիրառության ուսումնասիրությանը: Այդ ուսումնասիրությունները հնարավոր կդարձնեն դեղաբույսերից ստացված թուրմերի, պրեպարատների և սուբստանցիաների կիրառումը դարձնել ավելի հասցեական՝ կոնկրետ հիվանդությունների բուժման համար [5]: Ներկայումս կիրառվող մեծաթիվ դեղապատրաստուկների, սուբստանցիաների անընդմեջ թարմացվող տեսականու 1/3-ը պատրաստվում է դեղաբույսերից: Առաջավոր տեխնոլոգիաների ներդրման պայմաններում մեծանում է այն դեղամիջոցների թիվը, որոնք մաքուր վիճակում անջատվում են մարդկության կողմից ավելի վաղ կիրառում գտած դեղաբույսերից: Ներկայացվող աշխատանքը նվիրված է Գանգուր ավելուկի տարբեր օրգանների (ցողուններ, տերևներ, սերմեր) լուծամզվածքների քիմիական բաղադրության ուսումնասիրությանը:

Դեղաբույսերի դրական ներգործությունն օրգանիզմի վրա և քիմիական դեղամիջոցների նկատմամբ ունեցած առավելությունն ակնհայտ է: Բացի այն հանգամանքից, որ դեղաբույսերը քիչ թունավոր են, և հնարավոր է դրանց երկարատև օգտագործում, դեղաբույսերի առավելությունը նաև այն է, որ օրգանիզմի կողմից ավելի հեշտ են յուրացվում և հեշտ էլ ենթարկվում են կենսաքիմիական քայքայման: Դա պայմանավորված է նաև նրանով, որ բուսական բջիջների նյութերն իրենց կառուցվածքով ու բնույթով շատ ընդհանրություններ ունեն կենդանա-


կան բջիջներում առկա նյութերի հետ: Առավելություն է նաև այն հանգամանքը, որ դեղաբույսերի մեջ եղած բազմատեսակ հիմնական և ոչ հիմնական կենսաբանական ակտիվ նյութերն ապահովում են համալիր բուժման հաջողությունը [1]:

Հետազոտության նպատակը

Նպատակ է դրվել ստանալ Գանգուր ավելուկի հասունացած սերմերի մեթիլենքլորիդային լուծամզվածք, այն մշակել կալիումի հիդրօքսիդի էթանոլային լուծույթով՝ առանձնացնելու համար ճարպաթթուներն այլ օրգանական չեզոք նյութերի խառնուրդից, և քրոմատագրման մեթոդով որոշել դրանց որակական բաղադրությունը [2,3]:

Փորձնական մաս


Փորձերն իրականացվել են Գանգուր ավելուկի հասունացած, այլ խառնուրդներից նախապես մաքրված և չորացրած (խոնավագրվել են չորացնող պահարանում $100 \pm 5^\circ\text{C}$ -ում, 2 ժամ) սերմերի հետ, որոնք հավաքվել են աշնանը Ջերմուկից: Սերմերից յուղի անջատումն իրականացվել է Սոքսլետի մեթոդով՝ մեթիլենքլորիդով: Ստացված խառնուրդը մշակվել է կալիումի հիդրօքսիդի էթանոլային լուծույթով: Ավելուկ բույսի հասունացած սերմերի մեթիլենքլորիդային լուծամզվածքում պարունակվող ճարպաթթուներն այլ օրգանական, չեզոք բնույթի նյութերից առանձնացնելու համար իրականացվել է հիդրոլիզ: Առաջացած ճարպաթթուների K-ական աղերը ջրալույծ են, իսկ օրգանական լուծիչներում չեն լուծվում: Այդպիսով, հնարավոր է դառնում ճարպաթթուներն առանձնացնել այլ օրգանական միացություններից:



Այնուհետև ճարպաթթուների ջրային լուծույթը թթվեցրել ենք HCl-ի լուծույթով և առանձնացրել մաքուր ճարպաթթուները.



Ստացված ճարպաթթուները ենթարկվել են էսթերացման, և կատարվել է դրանց մեթիլէսթերների խառնուրդի գազ-հեղուկային քրոմատագրաֆիական վերլուծություն, որի արդյունքում հայտնաբերվել են ինը օրգանական միացություններ (նկ.1), որոնց անունները բերված են աղյուսակում.



Նկ. 1 Ճարպաթթուների մեթիլ էսթերների քրոմատագիրը

Աղյուսակ

Վերլուծության արդյունքում հայտնաբերված նյութերի անունները

No	Անունները
1	2-էթիլ հեքսանոլ
2	2-ֆենիլէթանոլ
3	Պելագոնաթթվի մեթիլ էսթեր
4	2,4-դիտրետրոլի ֆենոլ
5	13,16-օկտադեկադիենային թթվի մեթիլ էսթեր
6	Պալմիտինաթթվի մեթիլ էսթեր
7	Օլեինաթթվի մեթիլ էսթեր
8	Ստեարինաթթվի մեթիլ էսթեր
9	18-մեթիլ նոնադեկանաթթվի մեթիլ էսթեր

Ճարպաթթուները գրականությանը հայտնի են իրենց հակամանրէային ակտիվությամբ և համարվում են դասական հակաբիոտիկների այլընտրանքային տարբերակ [4]: Ճարպաթթուների կենսաբանական ակտիվությունը կախված է.

- *ածխածնային շղթայի երկարությունից, ըստ որի դասակարգվում են կարճ (մինչև 8 ածխածնի ատոմ), միջին*

(մինչև 12 ածխածնի ատոմ) և երկար (12-ից ավել ածխածնի ատոմ),

- կրկնակի կապերի առկայությունից, քանակից և դիրքից: Ըստ գրականության տվյալների՝ բակտերիաների դեմ ամենաակտիվը միջին երկարությամբ հազեցած և երկար շղթայով չհազեցած ճարպաթթուներն են: Ընդ որում ճարպաթթուների նկատմամբ գրամ-դրական բակտերիաներն ավելի զգայուն են գրամ-բացասականների համեմատ [6]: Երկար շղթայով չհազեցած ճարպաթթուների հակամանրէային ակտիվությունը մեծանում է շղթայի երկարացման և չհազեցվածության աստիճանի ավելացման հետ: Բարձր քանակով հակամիկրոբային ճարպաթթուներն ապակայունացնում են բակտերիաների թաղանթը, ինչը հանգեցնում է բջիջների թափանցելիության բարձրացման և լիզիսի: Այս ճարպաթթուներն ուղղակի կամ անուղղակի խաթարում են բջջաթաղանթով սննդանյութերի թափանցումը, էներգիայի անջատումը [7]: Հետազոտությունները ցույց են տվել երկար շղթայով չհազեցած ճարպաթթուների հակաբակտերիալ ազդեցությունը սննդամթերքով փոխանցվող բակտերիաների նկատմամբ:

Մ. Հերացու անվան ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետի քիմիայի ամբիոն
E-mail: arusik.sahakyan@mail.ru

Ա.Ս. Սահակյան

Գանգուր ավելուկի սերմերում ճարպաթթուների քիմիական կազմի ուսումնասիրությունը

Հաստատվել է, որ Գանգուր ավելուկ բույսի սերմերը պարունակում են 6 ճարպաթթվի մնացորդ, որոնցից առավել կարևոր են մեկ և երկու չհազեցած կապ պարունակող թթուները՝ մասնավորապես օլեինաթթվի ցիս- և տրանս իզոմերները: Վերջիններս հակաօքսիդանտներ են և օրգանիզմում իրականացնում են կարևոր գործառնություններ: Կատարված հետազոտությունները հնարավորություն կտան որոշելու Գանգուր ավելուկի՝ որպես բուժամիջոց և սնունդ կիրառելու ռիսկերը, օգտակարությունը՝ որպես սննդամթերք և բուժամիջոց:

А.С. Саакян

Изучение химического состава жирных кислот в семенах щавеля курчавого

В жирно-кислотной части семян растения щавель курчавый была определена подлинность 6 соединений, из которых наиболее важными являются кислоты, содержащие одну или две ненасыщенные связи, в частности цис- или транс- изомеры олеиновой кислоты.

Последние являются антиоксидантами и выполняют важные функции в организме.

Проведенные исследования дадут возможность определить применение щавеля курчавого в пищу, а также его пользу в качестве средства лечения.

A.S. Sahakyan

Study of the Chemical Composition of Fatty Acids in Curly Sorrel Seeds

It has been confirmed that the seeds of the Curly Arugula plant contain 6 fatty acid residues, of which the most important are acids containing one and two unsaturated bonds, in particular the cis- and trans-isomers of oleic acid. The latter are antioxidants and perform important functions in the body. The conducted studies will make it possible to determine the use of Curly Arugula as food, as well as its benefits as a treatment.

Գրականություն

1. Ճանաչողական Թ., Գերբացական Մ. (2014): Հայաստանի վայրի դեղաբույսեր // Երևան, Լուսակն, 2014, էջ 315:
2. Стратегия ВОЗ в области народной медицины, 2014, с. 23.
3. Химический анализ лекарственных растений под ред. Н.Л. Гринкевич, М., 1983.
4. Agans R, Gordon A, Kramer DLet al. Dietary fatty acids sustain the growth of the human gut microbiota. Appl Environ Microbiol. 2018, 84:e01525–18.
5. David J. N., Gordon M. C., Natural products as sources of new drugs over the last 25 years. Journal of natural products, 2007, No. 70(3), pp. 461–477.
6. Desbois and Smith 2010, Yoon et al. 2018.
7. Caesar R, Tremaroli V, Kovatcheva-Datchary Pet al. Crosstalk between gut microbiota and dietary lipids aggravates WAT inflammation through TLR signaling. Cell Metab., 2015, 22:658–68.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 634.11:632.951 (479.25)

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-44

Հ.Լ. Թերլեմեզյան, Մ.Ա. Սարգսյան, Հ.Ռ. Հարությունյան,
Ս.Մ. Սարգսյան, Ա.Ս. Հովսեփյան, Հ.Ն. Մկրտչյան, Ա.Մ. Ավագյան

***Bacillus thuringiensis* տեսակի տեղական բակտերիական միջատասպանների փորձարկում օդակավոր մետաքսագործի թրթուրների դեմ**

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ժ. Վարդանյանի կողմից 28/IV 2025)

Բանալի բառեր. օդակավոր մետաքսագործ, *Bt* տեսակի միջատասպաններ, կուլտուրային հեղուկներ, խնձորենի, կենսաբանական արդյունավետություն, վիճակագրական ցուցանիշներ:

Ներածություն: Օդակավոր մետաքսագործը (*Malacosoma neustria* L.) Հայաստանի Հանրապետության պայմաններում լրջորեն վնասում է պտղատու և անտառային ծառատեսակներին (տանձենուն, բալենուն, նշենուն, կաղնուն, բոխուն, չիչխանենուն, մասրենուն), [3, 8]: Վնասատուն հատկապես ակտիվորեն զարգանում է խնձորենու տերևներով սնվելիս, որի դեպքում բարձրանում են թրթուրների կենսունակությունը և թիթեռների պտղաբերությունը [3]: Ֆիտոֆագի թրթուրների հասցրած վնասից կանգ է առնում պտղատու ծառերի աճը, դրանք խիստ թուլանում են, վատ են պտղաբերում և տալիս են ցածրորակ պտուղներ:

Ուստի վնասատուի թրթուրների դեմ պայքարի միջոցառումների իրականացումը դառնում է անհրաժեշտություն:

Բույսերի պաշտպանության համաշխարհային պրակտիկայում ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում բույսերի վնասակար միջատների դեմ *Bacillus thuringiensis* տեսակի բակտերիական միջատասպանների կիրառությանը, որոնց օգտագործումն անվտանգ է մարդու և շրջակա միջավայրի համար [10, 11]:

Այնուհանդերձ հարկ է նշել, որ առևտրային բակտերիական պատրաստուկ ներկրելիս սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով 2–3 անգամ ավելանում է ներկրվող պատրաստուկի ինքնարժեքը, ինչը տնտեսապես շահավետ չէ [1]:

Հաշվի առնելով վերը նշված փաստարկները և ելնելով տեղական (հայրենական) *Bacillus thuringiensis* (Bt) տեսակի բակտերիական պատրաստուկի (պրեպարատի) թողարկման նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտությունից՝ նպատակ է դրվել բնության պայմաններում բնականորեն մահացած թրթուրներից մանրէաբանական եղանակով առանձնացնել միջատասպան բակտերիական շտամներ և վերջիններիս հիման վրա թողարկված կուլտուրային հեղուկները լաբորատոր և խնձորենու այգու պայմաններում փորձարկել օդակավոր մետաքսագործի ցածր հասակի թրթուրների դեմ:

Ձանագան ֆիտոֆագերի դեմ ազդման սպեկտրի վերջնական որոշումից հետո կընտրվեն կենսաբանական բարձր արդյունավետությամբ օժտված Bt տեսակի բակտերիական շտամներ՝ տեղական պատրաստուկ թողարկելու համար:

Նյութը և մեթոդները: Հետազոտության նյութ են հանդիսացել օդակավոր մետաքսագործի (*Malacosoma neustria* L.) I-II հասակի թրթուրները, մեր կողմից ձմեռային երկրաչափի (*Operophtera brumata* L.), խաղողի ողկույզակերի (*Lobesia botrana* Schiff.) և խնձորենու պտղակերի (*Laspeyresia pomonella* L.)՝ բնության պայմաններում բնականորեն մահացած թրթուրներից մանրէաբանական եղանակով համապատասխանաբար առանձնացված BtAM-2, BtHLT-9, BtMAS-33 բակտերիական միջատասպանները (անվանումը համահեղինակների կողմից), Bt տեսակի առևտրային բակտերիական պատրաստուկ բիտոքսիբացիլինը (FSF), (ԿԱ 1500 ԱՄ/մգ պատրաստուկային փոշում):

Հետազոտության նյութերից է նաև խնձորենին (սորտ՝ Ռենետ Սիմիրենկո):

Գիտափորձերն իրականացվել են 2021–2024 թթ.-ին լաբորատոր և խնձորենու այգու պայմաններում:

Bt տեսակի բակտերիական միջատասպանների առանձնացումը բնականորեն մահացած թրթուրներից կատարվել է 2021 թ.-ին լաբորատոր պայմաններում մսապեպտոնային ազար (ՄՊԱ) արհեստական սննդամիջավայրի վրա՝ նոսրացման եղանակով [2, 9]:

Առարկայակիր ապակու վրա պատրաստված բակտերիական քուրքում առկա միջատասպան սպոր – բյուրեղային բաղադրիչների հայտածումը կատարվել է ըստ հանձնարարականի [6]:

Կենսացենոզի առանձին տարրերից առանձնացված Bt տեսակի շտամների հիման վրա կուլտուրային հեղուկների թողարկումը կատարվել է Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ-ում:

Մեթոդական ձեռնարկի համաձայն [7]՝ 2022 թ.-ին լաբորատոր պայմաններում օդակավոր մետաքսագործի I-II հասակի թրթուրների դեմ կուլտուրային հեղուկների տարբեր խտությունների (200, 300, 400, 500, 600, 700, 800, 900 մլն սպոր/մլ հեղուկում) փորձարկումներով բացահայտվել է ցածր տիտրով արդյունավետ խտությունը, այն է՝ 600 մլն սպոր/մլ: Արձանագրված խտությամբ կուլտուրային հեղուկները փորձարկվել են գարնանը ձվերից դուրս եկած ֆիտոֆագի թրթուրների դեմ խնձորենու այգու պայմաններում (բաժնյակային և արտադրական փորձեր):

Բաժնյակային (փոքրածավալ) փորձերում օդակավոր մետաքսագործի թրթուրների դեմ 600 մլն սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղուկներով առանձին ցողումները կատարվել են 2023 թ.-ին մեջքի Ozdesan, մեծածավալ արտադրականը՝ 2024 թ.-ին OBT-1A մակնիշի տրակտորային սրսկիչներով:

Բաժնյակային փորձերում BtAM-2, BtHLT-9 և BtMAS-33 տարբերակներից յուրաքանչյուրում ներառվել է վնասատուով բնակեցված 3-ական ծառ (մեկական ծառ յուրաքանչյուր կրկնությունում), արտադրական փորձերում՝ 0,3-ական հեկտար այգի-փորձատեղամաս (0,1 հա յուրաքանչյուր կրկնությունում):

Բաժնյակային փորձերում, ծառերի բարձրությունից կախված, աշխատանքային (ցողվող) հեղուկի ծախսը կազմել է 1,4–1,9 լ/ծառին, արտադրական փորձերում՝ 1000 լ/հա:

Ստուգիչ են հանդիսացել վնասատուի թրթուրներով բնակեցված, բայց չցողված, որպես չափանմուշ՝ ԲՏԲ-ի 0,3%-անոց ջրային կախույթով ցողված ծառերը (առևտրային պատրաստուկի ծախսի նորման՝ 3 կգ/հա):

Գիտափորձերում ներառված տարբերակներն ունեցել են 3-ական կրկնություն: Արձանագրված արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության [4, 5]:

Արդյունքները և քննարկումը: 2021 թ. լաբորատոր հետազոտության արդյունքներով հաստատվել է, որ կենսացենոզում բնականորեն մահացած թրթուրներից մեր կողմից մանրէաբանական եղանակով առանձնացված BtAM-2, BtHLT-9, BtMAS-33 բակտերիական միջատասպանները ՄՊԱ սննդամիջավայրի վրա աճելիս միմյանցից տարբերվել են վեգետատիվ բջիջների և աճած գաղութների չափերով, գաղութների կառուցվածքով, պրոֆիլով, հանքային ազոտի և շաքարի յուրացման առանձնահատկությամբ (շտամների չափագրական, ձևաբանական և

ֆիզիոլոգիական առանձնահատկությունները կներկայացվեն առանձին հոդվածի տեսքով):

Լաբորատոր հետազոտություններով հաստատվել է, որ կուլտուրային հեղուկների տարբեր խտությունների (200–900 մլն սպոր/մլ) շրջակայքում ցածր տիտրով կենսաբանական բարձր արդյունավետություն օղակավոր մետաքսագործի I-II հասակի թրթուրների դեմ ցուցաբերել են 600 մլն սպոր/մլ խտությամբ առանձին կուլտուրային հեղուկները: BtAM-2, BtHLT-9 և BtMAS-33 տարբերակներում ֆիտոֆագի դեմ դրսևորված կենսաբանական արդյունավետության ցուցանիշները ցողումից 10 օր անց եղել են բարձր և ընդհանուր առմամբ տասանվել են 93,3–96,7%-ի սահմաններում:

Լաբորատոր պայմաններում արձանագրված կենսաբանական արդյունավետության բարձր ցուցանիշները հնարավորություն ընձեռեցին վերոնշյալ տիտրով կուլտուրային հեղուկները փորձարկելու ֆիտոֆագի թրթուրների դեմ նաև խնձորենու այգու պայմաններում (բաժնյակային փորձեր):

Բաժնյակային փորձերով հաստատված է (աղյուսակ 1), որ խնձորենու այգու պայմաններում փորձարկված կուլտուրային հեղուկները 600 մլն սպոր/մլ տիտրով օղակավոր մետաքսագործի I-II հասակի թրթուրների դեմ ցողումից 10 օր անց ևս ցուցաբերում են կենսաբանական բարձր արդյունավետություն (91,5–93,2%):

Վերջիններիս նույնանուն ցուցանիշը FSCF չափանմուշային տարբերակում կազմել է 95,6%:

Կենսաբանական արդյունավետության վերը նշված ցուցանիշները պահպանվել են մինչև թրթուրների հարսնյակավորումը:

Ստուգիչ (չցողված) տարբերակներում թրթուրների մահացություն չի արձանագրվել:

Բաժնյակային փորձերում, ելնելով արձանագրված կենսաբանական արդյունավետության բարձր ցուցանիշներից, գիտափորձերը շարունակվեցին նաև արտադրության պայմաններում (աղյուսակ 2):

Աղյուսակ 1

Bt տեսակի բակտերիական միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը օղակավոր մետաքսագործի I-II հասակի թրթուրների դեմ Արագածոտնի մարզի խնձորենու այգիներում (բաժնյակային փորձեր, Օհանավան, 2023 թ.):

Տարբերակներ	Թրթուրների ընդհանուր քանակը խնձորենու 30 գծմ ճյուղի վրա, հատ	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %		
		3	7	10
BtAM-2	78	55,1	69,2	92,3

Bt _{HLT} -9	74	51,4	75,7	93,2
Bt _{MAS} -33	59	49,1	71,2	91,5
ԲՏԲ (չափանմուշ)	68	64,7	80,9	95,6

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ հաշվառման օրերին կենսաբանական արդյունավետության առավել բարձր ցուցանիշներն (90,7–94,8%) արձանագրվել են միջատասպաններով ցողումից 10 օր անց:

Աղյուսակ 2

Բt տեսակի բակտերիական միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը օղակավոր մետաքսագործի I-II հասակի թրթուրների դեմ Արագածոտնի մարզի խնձորենու այգիներում
(արտադրական փորձեր, Օհանավան, 2024 թ.):

Տարբերակներ	Թրթուրների ընդհանուր քանակը խնձորենու 30 գծմ ճյուղի վրա, հատ	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %		
		3	7	10
Bt _{AM} -2	82	48,8	59,8	91,5
Bt _{HLT} -9	69	52,2	73,9	92,8
Bt _{MAS} -33	75	48,0	69,3	90,7
ԲՏԲ (չափանմուշ)	77	61,0	79,2	94,8

Կենսաբանական արդյունավետության ցուցանիշները ցողումից 3 և 7 օր անց 10-րդ օրվա համեմատ եղել են նշանակալից ցածր (աղյուսակներ 1 և 2), որը պայմանավորված է բակտերիական միջատասպանների ազդման մեխանիզմի առանձնահատկությամբ:

Բակտերիական ինսեկտիցիդներով ցողված խնձորենու այգում ստուգիչ (չցողված) տարբերակում առկա թրթուրների համեմատ դիտվել է օղակավոր մետաքսագործի թրթուրների շարժման ինտենսիվության անկում, սնվելուց աստիճանաբար հրաժարում, մարմինների փոքրացում և գորշացում, որոնք էլ հանգեցրել են թրթուրների մահվան:

Արտադրական փորձերում օղակավոր մետաքսագործի թրթուրների դեմ 10-րդ օրն արձանագրված կենսաբանական արդյունավետության ցուցանիշների վիճակագրական վերլուծությամբ հաստատված է (աղյուսակ 3), որ փորձի սխալի և տատանման գործակցի ցուցանիշները, բակտերիական միջատասպաններով ցողված տարբերակներում ընդհանուր առմամբ տատանվելով համապատասխանաբար 3,6–4,6 և 6,19–8,00%-ի սահմաններում, հաստատել են, որ հետազոտության արդյունքները ստույգ են:

Աղյուսակ 3-ի տվյալներից միաժամանակ երևում է, որ $P_{0,95}$ և $n=3$ -ի դեպքում Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի հաշվարկային ցուցանիշները, ընդհանուր առմամբ տատանվելով 0,359–1,756-ի սահմաններում և լինելով փոքր Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի աղյուսակային 3,182 ցուցիչից, հաստատել են, որ առանձին փորձարկված կուլտուրային հեղուկների և չափանմուշային ԲՏԲ-ի ցուցաբերած կենսաբանական արդյունավետության ցուցանիշների միջև չկա արժանահավատ տարբերություն:

Աղյուսակ 3

Ցողումից 10 օր անց կրկնություններում օդակավոր մետաքսագործի I–II հասակի մահացած թրթուրների միջին քանակությունների վիճակագրական ցուցանիշները (արտադրական փորձեր, 2024թ.):

Տարբերակները	Մահացած թրթուրների ընդհանուր քանակը տարբերակում, հատ	Կրկնություններում մահացած թրթուրների միջին քանակը, հատ	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %				
			Քառակուսային շեղումը	Տատանման գործակիցը, %	Միջին սխալը	Փորձի սխալը, %	Ստյուդենտի $t_{\text{չափ-}}$ -ի հաշվարկային ցուցանիշները
Bt _{AM-2}	75	25,0	2,000	8,00	1,155	4,6	0,359
Bt _{HLT-9}	64	21,33	1,698	7,96	0,980	4,6	1,756
Bt _{MAS-33}	68	22,67	1,404	6,19	0,811	3,6	1,058
ԲՏԲ (չափանմուշ)	73	24,33	1,718	7,06	0,992	4,1	-

Ծանոթագրություն. $P_{0,95}$ և $n=3$ -ի դեպքում Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի աղյուսակային ցուցիչը հավասար է 3,182-ի:

Եզրակացություններ: Տեղական բակտերիական միջատասպան շտամները միմյանցից տարբերվել են չափագրական և ֆիզիոլոգիական որոշ առանձնահատկությամբ:

Bt տեսակի տեղական երեք շտամների հիման վրա առանձին թողարկված կուլտուրային հեղուկները 600 մլ-ն սպոր/մլ խտությամբ բարձրարդյունավետ են օդակավոր մետաքսագործի թրթուրների դեմ լաբորատոր և խնձորենու այգու պայմաններում:

Վիճակագրական ցուցանիշներով հաստատված է, որ գիտափորձերի արդյունքները ստույգ են, փորձնական, և ԲՏԲ չափանմուշային տարբերակներում դրսևորված կենսաբանական արդյունավետության ցուցանիշների միջև չկա արժանահավատ տարբերություն:

Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն, Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ
E-mail: hlt_arm@yahoo.com

**Հ.Լ. Թերլեմեզյան, Մ.Ա. Սարգսյան, Հ.Ռ. Հարությունյան,
Ս.Մ. Սարգսյան, Ա.Ս. Հովսեփյան, Հ.Ն. Մկրտչյան, Ա.Մ. Ավագյան**

***Bacillus thuringiensis* տեսակի տեղական բակտերիական
միջատասպանների փորձարկում օդակավոր մետաքսագործի
թրթուրների դեմ**

Բնականորեն մահացած թրթուրներից մանրէաբանական եղանակով ՄՊԱ սննդամիջավայրի վրա առանձնացվել է Bt տեսակի բակտերիական երեք շտամ (Bt_{AM}-2, Bt_{HLT}-9, Bt_{MAS}-33), որոնք միմյանցից տարբերվել են գաղութների և վեգետատիվ բջիջների չափագրական ցուցանիշներով, գաղութների պրոֆիլով, կառուցվածքով, հանքային ազոտի և շաքարի յուրացման առանձնահատկությամբ:

Հաստատված է, որ վերը նշված երեք շտամների հիման վրա առանձին թողարկված 600 մլ սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղինակները լաբորատոր և խնձորենու այգու պայմաններում օդակավոր մետաքսագործի I-II հասակի թրթուրների դեմ ցողումից 10 օր անց դրսևորում են կենսաբանական բարձր արդյունավետություն (90,7-96,7%):

Վիճակագրական ցուցանիշներով հաստատված է, որ հետազոտության արդյունքները ստույգ են, բացի այդ, ֆիտոֆագի դեմ փորձարկված կուլտուրային հեղուկների և չափանմուշային ԲՏԲ տարբերակներում արձանագրված կենսաբանական արդյունավետության ցուցանիշների միջև չկա արժանահավատ տարբերություն:

**Г.Л. Терлемезян, М.А. Саркисян, А.Р. Арутюнян, С.М. Саркисян,
А.С. Овсепян, А.Н. Мкртчян, А.М. Авагян**

Испытания местных бактериальных инсектицидов вида *Bacillus thuringiensis* против гусениц кольчатого шелкопряда

Из естественно погибших гусениц микробиологическим способом на среде МПА выделено три штамма вида Bt (Bt_{AM}-2, Bt_{HLT}-9, Bt_{MAS}-33), которые друг от друга отличались обмерными показателями вегетативных клеток, колоний, построениями колоний, по особенностям усвоения минерального азота и сахаров.

Установлено, что культуральные жидкости с титром 600 млн спор/мл, созданные в отдельности на основе вышеуказанных трех штаммов, в условиях лабораторных и яблоневого сада проявили высокую биологическую эффективность (90,7–96,7%) против гусениц I-II возрастов кольчатого шелкопряда на 10-й день после опрыскивания.

Статистическая обработка результатов исследований показала, что они достоверны и нет различий между биологической эффективностью указанных культуральных жидкостей и эталонным вариантом БТБ.

**H.L. Terlemezyan, M.A. Sargsyan, H.R. Harutunyan, S.M. Sargsyan,
A.S. Hovsepyan, H.N. Mkrtchyan, A.M. Avagyan**

Testing of Local Bacterial Insecticides of the *Bacillus Thuringiensis* Species against *Malacosoma Neustria* Caterpillar

Three *Bacillus thuringiensis* (Bt) strains - Bt_{AM}-2, Bt_{HLT}-9 and Bt_{MAS}-33 were isolated from naturally dead caterpillar using microbiological methods on Meat peptone agar (MPA), a general-purpose medium. These strains differed in the morphological characteristics of vegetative cells and colonies, including colony structure, profile, and the specificity of mineral nitrogen and sugar assimilation.

Culture fluids with a titer of 600 million spores/ml, each prepared from one of the four strains, demonstrated high biological efficacy (90,7-96,7%) against first and second instar caterpillar of *Malacosoma neustria*, 10 days after spraying under both laboratory and apple orchard conditions.

Statistical analysis confirms the accuracy of the results; moreover, there is no significant difference in biological efficacy between the tested culture fluids and the standard BTB formulations against the phytophagous pest.

Գրականություն

1. Ավագյան Ա.Մ., Սարգսյան Մ.Ա. Բակտերիական միջատասպանների փորձարկում կաղամբի տերևակեր վնասատուների դեմ արտադրության պայմաններում: Հայաստանի կենսաբանական հանդես, Հ. LXIV, 2, էջ 25–29, 2012:

2. Թռչունյան Ա.Հ., Փանոսյան Հ.Հ., Բազումյան Ի.Լ., Մարգարյան Ա.Ա., Պոպով Յու.Գ. Մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ (Ուսումնա-մեթոդական ձեռնարկ): Երևան, ԵՊՀ, 2014, 314 էջ:
3. Մարգարյան Մ., Նալբանդյան Ա. Օդակավոր մետաքսագործը: Գիտություն և տեխնիկա: Երևան, № 6 (298), 1988, էջ 26–30:
4. Ашмарин И.П., Воробьев А.А. Статистические методы в микробиологических исследованиях. Л.: Медгиз, 1962, 180 с.
5. Бернштейн А. Справочник статистических решений. М., Статистика, 1968, 162 с.
6. Иванов Г.М., Гукасян А.Б. Окраска кристаллов и вегетативных клеток энтомопатогенных бактерий. Микробиология, т.35, в.1, 1966, с. 179–180.
7. Методические указания по испытанию биопрепаратов для защиты растений от вредителей, болезней и сорняков. М.: Колос, 1973, 41 с.
8. Мирзоян С.А. Дендрофильные насекомые лесов и парков Армении. Ереван: Айа-стан, 1977, с. 77–81.
9. Практикум по микробиологии. М.: МГУ, 1976, 308 с.
10. Саранцева Н.А., Бобрешиова И.Ю. Биопрепараты против колорадского жука. Защита и карантин растений. М., 2006, № 7, с. 27–28.
11. Siegel J.P. The mammalian safety of *Bacillus thuringiensis*- based insecticides. Journal of Invertebrate Pathology, 77, Issue 1, 2001, pp. 13–21.

БОТАНИКА

УДК 582.71(479.25)

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-53

Член-кор. НАН РА Ж.А. Варданян

Ведущая роль семейства Розоцветных (*Rosaceae*) в формировании аборигенной дендрофлоры и создании дендроколлекции Ботанического сада НАН Армении

(Представлено 20/VI 2025)

Ключевые слова: *дерево, кустарник, дендроколлекция, декоративность, эндемик, род, вид.*

Лесная растительность в Армении занимает всего лишь около 10% ее территории, однако в республике чрезвычайно богато представлены хозяйственно ценные и редкие виды древесных растений. Последние являются представителями 346 видов и 54 семейств [2, 3].

Дендрофлора Армении необычайно богата и разнообразна. Она содержит в 2–3 раза больше видов, чем в более обширных в территориальном отношении регионах Кавказа и даже в 15–20 раз больше, чем в других экорегионах умеренной зоны Северного полушария [5, 6, 8]. Такое чрезвычайное богатство дендрофлоры обусловлено многообразием физико-географических условий Армении, сложностью ее геологической истории, а также географическим положением республики на стыке двух ботанических провинций генезиса – армяно-иранской и кавказской [9].

Анализ таксономического состава аборигенной дендрофлоры показал, что ведущим семейством как по числу родов, так и по числу видов является *Rosaceae* (17 родов и 118 видов). Только представители данного семейства составляют около 30% от общего числа видов древесных Армении. Крупными родами как для дендрофлоры в целом, так и в сем. *Rosaceae* являются *Pyrus* (32 вида), *Rosa* (18), *Sorbus* (13), *Rubus* (14), *Crataegus* (22) и др. (табл. 1).

Таблица 1

Таксономическое богатство родов в сем. *Rosaceae*

Род	Число видов в Армении	В том числе	
		аборигенных	интродуцированных
<i>Amelanchier</i>	2	1	1
<i>Amygdalus</i>	3	2	1
<i>Armeniaca</i>	3	1	2
<i>Cerasus</i>	4	4	-
<i>Chaenomeles</i>	2	-	2
<i>Cotoneaster</i>	6	4	2
<i>Crataegus</i>	28	22	6
<i>Cydonia</i>	1	1	-
<i>Exochorda</i>	1	-	1
<i>Malus</i>	8	1	7
<i>Mespilus</i>	1	1	-
<i>Padus</i>	4	1	3
<i>Persica</i>	1	1	-
<i>Physocarpus</i>	6	-	6
<i>Prunus</i>	4	2	2
<i>Pyracantha</i>	2	-	2
<i>Pentaphylloides</i>	1	1	-
<i>Pyrus</i>	34	32	2
<i>Rosa</i>	22	18	4
<i>Rubus</i>	14	14	-
<i>Sorbaria</i>	1	-	1
<i>Sorbus</i>	17	13	4
<i>Spiraea</i>	9	2	7
Всего	173	120	53

Одним из важнейших показателей специфичности той или иной дендрофлоры является эндемизм, который наиболее высокий у сем *Rosaceae* [3].

Следует особо отметить род *Pyrus*. Выявлено, что из более чем 60 видов мирового генофонда этого рода, насчитывается 32 представителя, произрастающих на территории Армении [1], 24 ксерофильных вида встречаются в Дарелегисском флористическом районе (Вайоц Дзорский административный марз), 12 из которых являются эндемиками для флоры Армении (*Pyrus sosnovsky* Fed, *P. Tamamschjanae* Fed, *P. daralagezi* Mulk, *P. complexa* Rubtz, *P. hajastana* Mulk. и др.). Как утверждает Г. Файвуш [10], род *Pyrus* занимает первое место в родовом спектре эндемичных таксонов Армении (табл. 2, 3). Большинство из эндемичных видов этого рода узко-локальные редкие эндемики, включенные в Красную Книгу Армении [11].

Это соотношение среди указанных в табл. 1 родов вполне закономерно, так как Южное Закавказье, в целом, и Армения, в частности, являются

одним из центров видообразования родов *Pyrus*, *Sorbus*, *Crataegus*, *Rosa* и др. Этот факт подтверждается описанием нескольких видов из указанных родов [1, 4, 7, 10].

Таблица 2

Видовое богатство крупных родов сем. *Rosaceae*

Род	Общее число видов *	Число видов в Армении	% от общего числа видов в роде	Число интродуцированных видов
<i>Pyrus</i>	60	32	53.0	2
<i>Rosa</i>	300	18	6.0	-
<i>Sorbus</i>	100	13	13.0	4
<i>Crataegus</i>	200	22	11.0	6
<i>Rubus</i>	150	14	8.0	-
<i>Cotoneaster</i>	100	8	8.0	2

*Данные приводятся по «Ареалы деревьев и кустарников СССР», т. 3, 1986 г.

Таксономическое богатство родов в семействе *Rosaceae* представлено в табл. 1, согласно которой общее число видов в Армении составляет 173, в том числе 120 аборигенные, 53 интродуцированные.

Что касается интродуцированных родов представителей сем. *Rosaceae*, то они немногочисленны, известно всего 5 родов: *Chaenomeles* – 2 вида, *Exochorda* – 1, *Physocarpus* – 4, *Pyracantha* – 1 и *Sorbaria* – 1.

Биоморфный спектр семейства показывает, что из общего количества древесных 97 видов деревьев, 61 – кустарников и 14 –полукустарников (представители рода *Rubus*). Разнообразный состав представителей жизненных форм древесных растений из сем. *Rosaceae* указывает на их высокую экологическую и биологическую пластичность в сложных климатических условиях Армении в процессе эволюционного развития флоры и растительности региона.

Проведенный экологический анализ древесных представителей сем. *Rosaceae* показывает, что подавляющее их большинство мезофиты и мезоксерофиты: около 80 видов из родов *Amelanchier*, *Cotoneaster*, *Malus*, *Mespilus*, *Padus*, *Rosa*, *Spiraea*, *Physocarpus*, *Chaenomeles* и др. Аборигенные виды указанных родов принимают определенное участие в образовании различных формаций мезофильной древесной растительности Армении: буковых, дубово-грабовых лесов, верхнего пояса леса, а также кустарниковых зарослей в различных высотных поясах. Мезофильные виды являются голарктическими, кавказскими и гиркано-эвксинскими элементами флор.

Подавляющее большинство представителей семейства одновременно являются дикими плодовыми для дендрофлоры Армении (виды родов *Pyrus*, *Malus*, *Cerasus*, *Crataegus*, *Sorbus*, *Amygdalus* и др.) и представляют

большой интерес для селекции в плодоводстве. Ряд высокодекоративных видов (представители родов *Sorbus*, *Cotoneaster*, *Spiraea*, *Rosa*, *Amelanchier* и др.) весьма перспективны также для зеленого строительства республики. В частности, для групповых посадок пригодны представители родов *Amelanchier*, *Cerasus*, *Chaenomeles*, *Exochorda*, *Pyracantha*, *Cotoneaster*, *Mespilus* и др. Некоторые же представители родов *Chaenomeles*, *Spiraea*, *Rosa* и др. являются основным компонентом для садов длительного цветения, а некоторые виды из родов *Sorbus*, *Pyrus* и др. пригодны для уличных насаждений.

Таблица 3

Эндемики в сем. *Rosaceae*

Род	Общее число видов	В Армении	Эндемики
<i>Amygdalus</i>	40	3	1
<i>Cotoneaster</i>	100	8	1
<i>Crataegus</i>	200	22	2
<i>Pyrus</i>	60	32	12
<i>Rosa</i>	400	18	4
<i>Rubus</i>	150	14	2

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաչյանի անվան բուսաբանության ինստիտուտ
E-mail: zh.vardanyan@gmail.com

Член-кор. Ж.А. Варданян

Ведущая роль семейства Розоцветных (*Rosaceae*) в формировании аборигенной дендрофлоры и создании дендроколлекции Ботанического сада НАН Армении

Обсуждается роль ведущего по содержанию таксонов (родов и видов) семейства Розоцветных (*Rosaceae*) в формировании дендрофлоры и древесной растительности Армении, а также создании дендроколлекции Ботанического сада республики. Показано, что таксономическое богатство сем. *Rosaceae* составляет 173 вида, в том числе 120 – аборигенные, 53 – интродуцированные.

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժ.Հ. Վարդանյան

Վարդագգիների (*Rosaceae*) ընտանիքի առաջատար դերը արբրիզեն դենդրոֆլորայի ձևավորման և Հայաստանի ԳԱԱ բուսաբանական այգու դենդրոհավաքածուների ստեղծման գործում

Քննարկվում է Վարդագգիների (*Rosaceae*) ընտանիքի դերը որպես հարուստ տաքսոններ (ցեղ, տեսակ) պարունակող ընտանիք, ինչպես Հայաստանի տեղածին դենդրոֆլորայի ձևավորման, այնպես էլ ԳԱԱ բուսաբանական այգու դենդրոհավաքածուների ստեղծման գործում: Բացահայտված է, որ Վարդագգիների ընտանիքը պարունակում է ծառերի ու թփերի 173 տեսակ, այդ թվում՝ 120 – արբրիզեն, 53-ներմուծված:

Corresponding member of NAS RA Zh.H. Vardanyan

The leading Role of the *Rosaceae* Family in the Formation of Aboriginal Dendroflora and the Creation of the Dendrocollection of the Botanical Garden of NAS RA

The article discusses the role of the *Rosaceae* family as one containing rich taxa (genera and species), both in the formation of the native dendroflora of Armenia and in the creation of the dendrocollection of the Botanical Garden of NAS. It has been revealed that the *Rosaceae* family contains 173 species of trees and shrubs, including 120 aboriginal and 53 introduced.

Литература

1. Акопян Ж.А. Эндемичные груши (*Pyrus*, *Rosaceae*) флоры Армении и Южного Закавказья. Мат. межд. науч. конф. «Изучение флоры Кавказа», Пятигорск, 2010, с. 9–10.
2. Варданян Ж.А. Деревья и кустарники Армении в природе и культуре. Ереван, 2003, 367с.
3. Варданян Ж.А. Научные основы интродукции древесных растений в Армении. Ереван: изд. «Гитутюн» НАН РА, 2012, 398 с.
4. Габриэлян Э.Ц. Рябины (*Sorbus* L.) Западной Азии и Гималаев. Ереван, 1978, 263 с.
5. Коропачинский И.Ю. Дендрофлора Алтайско-Саянской горной области. Новосибирск, 1975, 290 с.
6. Коропачинский И.Ю. Древесные растения Сибири. Новосибирск, 1983, 384 с.

7. *Мулкиджяни Я.И.* Арборифлора Армянской ССР (деревья и кустарники). Автореф. дис. ... канд. биол. наук. Ереван, 1969, 40 с.
8. *Прилипко Л.И.* Анализ дендрофлоры Азербайджана. Межд. симп. по биологии древесных растений. Нитра, 1973, с. 605–612.
9. *Тахтаджян А.Л.* Флористические области Земли. Л., 1978, 247 с.
10. *Файвуш Г.М.* Эндемичные растения флоры Армении. Фл., растит. и раст. рес. Армении, Ереван, 2007, 16, с. 62–68.
11. *Tamanyan K., Fayvush G., Nanagyulyan S., Danielyan T. (eds.)* Red Book of Plants of the Republic of Armenia (plants and fungi). Yerevan, 2010, p. 598.

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 635.9+631.542] (419.25)

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-59

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ժ. Հ. Վարդանյան, Արծ.Ա. Գրիգորյան,
Ա.Հ. Բեգոյան

Գեղազարդ ծառերի ու թփերի էտի և ձևավորման խնդիրները
Երևանի կանաչ տնկարկներում

(Ներկայացված է 31/III 2025)

Բանալի բառեր. *կանաչ տնկարկ, ծառ, թուփ, սաղարթի ձևավորում, սանիտարական էտ, կենդանի ցանկապատ:*

Ներածություն: Ծառաբույսերը բարդ ինքնակարգավորվող կենսա-
համակարգ ունեցող օրգանիզմներ են, որոնց մորֆոգենեզն ընթացել է
գենոտիպի և միջավայրի պայմանների բարդ փոխհարաբերության
արդյունքում: Ծառերի մոտ արմատ-տերև կոռելյացիոն կապի գոյութ-
յամբ ստեղծվում են առավել բարդ ինքնակարգավորվող կապեր սա-
ղարթի ու արմատների կենսագործունեության և բնափայտի ձևավոր-
ման միջև, որն էլ առաջացնում է ծառաբույսերի վերգետնյա օրգաննե-
րի անհավասարաչափ աճ, և որի կանոնավորման համար անհրաժեշ-
տություն է առաջացել մարդու միջամտությունը [3, 4, 6–8]:

Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում, պայմանավոր-
ված աշխարհագրական տեղադիրքով, հողակլիմայական պայմաննե-
րով, խորհուրդ է տրվում իրականացնել ծառերի ու թփերի տարբերակ-
ված սանիտարական էտի և ձևավորման ֆիտոտեխնիկական միջամ-
տություն, որպեսզի կանաչ տնկարկները նախ չկորցնեն իրենց ֆունկ-
ցիոնալությունը, լինեն գեղազարդ և ներդաշնակ ճարտարապետական
կառույցներին, միաժամանակ մարդկանց պարզեն գեղագիտական
բավականություն: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ մայ-
րաքաղաքի ներքաղաքային կանաչ տնկարկներում, մասնավորապես
փողոցային տնկարկներում (պողոտա, փողոց), նախկինում կատար-
ված սխալ էտի հետևանքով տարիներ անց ծառերի մոտ առաջ են եկել

դժվար կարգավորվող բազմաթիվ խնդիրներ: Ներկայումս Երևան քաղաքի կանաչ տնկարկներում կանաչապատման աշխատանքները, այդ թվում՝ ծառերի էտն ու ձևավորումը, իրականացնում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը, այսուհետև՝ «ԿՇՄՊ ՀՈԱԿ», որի փորձառու մասնագետները կանաչապատման աշխատանքների շրջանակում ունակ են իրականացնելու ծառերի մասնագիտացված էտ և ձևավորում:

Նյութը և մեթոդները: Ներկայացված հետազոտական աշխատանքում որպես նյութ են ծառայել Երևան քաղաքի կանաչ տնկարկներում առկա ծառաթփատեսակները, որոնք երթուղային եղանակով մեր կողմից ենթարկվել են մանրակրկիտ ուսումնասիրության: Ծառերի և թփերի էտն ու ձևավորումը քաղաքային կանաչ տնկարկների բնականոն և համաչափ աճն ու գեղազարդությունն ապահովող անհրաժեշտ ֆիտոտեխնիկական միջոցառումներ են, որոնց ճիշտ կատարման դեպքում կկրճատվի կամ նվազագույնի կհասցվի ծառերի տապալման, ճյուղերի կոտրման վտանգը, միաժամանակ կբարձրանան ծառերի կենսունակությունը և գեղազարդությունը: Մեր ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է մայրաքաղաքի ներքաղաքային կանաչ տնկարկներում առկա ծառատեսակների աճման ու զարգացման տարբեր փուլերում՝ գարուն, ամառ, ուշ աշուն, իրականացնել իրավիճակային տարբերակված էտ և սաղարթի համապատասխան ձևավորում, որի արդյունքում կապահովվեն առողջ և գեղեցիկ սաղարթով գեղազարդ ծառեր:

Համաձայն մեր կողմից իրականացված հետազոտությունների՝ Երևանի խիստ ցամաքային կլիման, օդի չորությունը, տեղումների դեֆիցիտը, ամռան բարձր, ձմռան ցածր ջերմաստիճանը, վաղգարնանային և ուշաշնանային ցրտահարությունները, ինչպես նաև հողերի որակական հատկանիշները բացասական ազդեցություն են թողնում ծառաբույսերի աճի, զարգացման, սաղարթի ձևավորման վրա, որոնց պարագայում էլ անհրաժեշտություն է առաջանում գրեթե բոլոր ծառերն էտել առանձնահատուկ ձևով (նկ. 1): Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում ծառերի էտը սովորաբար իրականացվում է 2 եղանակով.

1. Մանիտարական էտ: Կանաչ տնկարկներում բույսերի աճը, զարգացումը, տնկարկի խնամքը կանոնավորող ագրոտեխնիկական միջոցառում է, որի ժամանակ վեգետացիայի ընթացքում ծառերից, թփերից հեռացվում են չորացած, վնասված, վարակված, հիվանդ, քամուց, ձնից և այլ պատճառներից կոտրված ճյուղերը, երբեմն նաև ծառերն ու թփերը՝ ամբողջությամբ: Մանիտարական էտ իրականացվում է ինչպես ներքաղաքային, այնպես էլ մերձքաղաքային կանաչ տնկարկներում,

որի ժամանակ ծառի սաղարթը նոսրանալով բարելավում է օդի հոսքը, ինչը կարող է շատ օգտակար լինել մյուս ճյուղերի արագ աճման ու վերականգնման համար: Իրար խաչվող ճյուղերը նույնպես պետք է հատվեն ու հեռացվեն՝ հետագայում վթարային իրավիճակներ չստեղծելու համար:

Երևանում ծառերի սանիտարական էտման ժամանակահատվածում՝ հատկապես փողոցային տնկարկներում, ելնելով մեր փորձից, խորհուրդ է տրվում առաջին հերթին հեռացնել, կարճացնել այն ծառերի ու թփերի ճյուղերը, որոնք խոչընդոտում են տեսախցիկների, լուսացույցերի աշխատանքը, արտաքին լուսավորությունը և տրանսպորտային շարժակազմերի երթևեկությունը: Միաժամանակ ներքաղաքային կանաչ տնկարկներում անհրաժեշտ է ծառերի սանիտարական էտման աշխատանքներն իրականացնել դրանց հարաբերական հանգստի շրջանում՝ գարնանը կամ ուշ աշնանը, և առաջացած կտրվածքները մշակել այգու հատուկ քսուքներով՝ հնարավորության սահմաններում նվազեցնելու ցրտահարության ու վարակման ռիսկերը:

2. Խորը էտ և երիտասարդացում: Հարկ է նշել, որ ծառերի խորը էտի պահանջ հիմնականում առաջանում է պտղատուների մոտ, երբ բնից ճյուղավորված հասուն ցողունների կարճացմամբ ևս մի քանի տարի երկարաձգվում է ծառի բերքատվությունը: Ներքաղաքային կանաչ տնկարկներում նման էտ խորհուրդ չի տրվում, իսկ արձանագրվելու դեպքում ընկալվում է որպես ապօրինի գործունեություն և պատժվում է իրավապահ մարմինների կողմից (նկ. 2): Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում հաճախ նկատվում են դեպքեր, երբ ծառերի ծեղացմանը զուգընթաց նրանց մոտ խախտվում է արմատատերևային կոռեյացիոն կապը, արդյունքում կրճատվում են սինթեզված օրգանական նյութերը, և սկսվում է ծառերի գազաթնային չորացում: Նմանատիպ իրավիճակներում խորհուրդ է տրվում երիտասարդացնող էտի օգնությամբ պահպանել ծառերի սաղարթի նախկին ձևը, վերջինս մասնակի փոքրացնել և որոշ ժամանակով երկարաձգել ծառերի կենսունակությունն ու ֆունկցիոնալությունը և գեղազարդությունը (նկ. 3):

Երևանի կանաչ տնկարկներում՝ հատկապես փողոցային տնկարկներում, բացի ծառերի ավանդական դարձած սանիտարական էտից, խորհուրդ է տրվում նորատունկ ծառերի պարտիզային ձևերի (գնդաձև, բրգաձև, կոնաձև, պյունաձև, լացող և այլն) սաղարթը 2-րդ վեգետացիոն տարվա ընթացքում ենթարկել ձևավորման, էտման, որպեսզի տեսակին բնորոշ սաղարթի ձևը կայունանա և առաջիկա տարիներին պահպանվի:

Հարկ է նշել, որ ձևավորման և նոսրացման էտերը շատ կարևոր են գեղազարդ ծառերի ու թփերի տնկարաններում, մասնավորապես

դպրոց-հողամասերում, որտեղ տարբեր ստանդարտի տնկիների սաղարթում կմախքային ճյուղերի անհրաժեշտ խտությամբ ու լույսի հավասարաչափ բաշխմամբ, ինչպես նաև բնի շտամբի ֆիքսմամբ ձևավորվում է ներքաղաքային կանաչ տնկարկներում, հատկապես փողոցային տնկարկներում, տնկվող ծառատեսակների մեծ տրամաչափի տնկանյութը: Հայաստանի Հանրապետությունում նման տնկարաններ դեռևս չկան, բացառությամբ Երևանում «ԿՇՄՊ ՀՈԱԿ»-ի կողմից 2024 թվականին 25 հա հողատարածքում հիմնադրված արդիական, մասնագիտացված տնկարանի, որը առաջիկա 3–5 տարիների ընթացքում Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկների համար կաճեցնի համապատասխան դենդրոմետրիկ ցուցանիշներ ունեցող տնկանյութ: Խորհուրդ է տրվում նշված տնկարանում սաղարթի ձևավորման առաջին էտը կատարել 1-ին դպրոց-հողամասում բուսակների տնկման հաջորդ տարվա գարնանը՝ սկզբում ցողունի ծերատմամբ, այնուհետև սաղարթի նոսրացմամբ, նպատակ հետապնդելով ունենալ ուղղաձիգ, հավասարաչափ, գեղեցիկ սաղարթ ունեցող ստանդարտային տնկանյութ: Տնկարանի 2-րդ դպրոց-հողամասում սաղարթի կրկնակի ձևավորմամբ և պատվաստմամբ հիմք է տրվում 3-րդ դպրոց-հողամաս տեղափոխվող տնկանյութի համար, որն էլ 1–2 տարվա ընթացքում վերածվում է ներքաղաքային կանաչ տնկարկների համար պիտանի խոշորաչափ տնկանյութի [1]:

Վերլուծություն: Երևանում խորհրդային և հետխորհրդային տարիներից հատկապես փողոցային տնկարկներում, պայմանավորված նեղ մայրերով, բնակարաններում լույսի անբավարարվածությամբ, ծառերի միջով անցնող բազմաթիվ էլեկտրական և այլ մալուխներով, լուսային և ջերմային ռեժիմների խախտումներով, ծառերի անբավարար պայքարի միջոցառումներով, ինչպես նաև հմուտ, արհեստավարժ մասնագետների պակասով, հաճախ իրականացվել է ծառերի խորը էտ, որի հետևանքով էլ տեղի է ունեցել ծառերի սաղարթի դեֆորմացիա, առաջ են եկել մի շարք հիվանդություններ, որոնք էլ փողոցային տնկարկներում բարդություններ են առաջացրել ծառերի էտման աշխատանքներում [2, 4]:

Մայրաքաղաքի ներքաղաքային կանաչ տնկարկներում, այդ թվում՝ փողոցներում և պողոտաներում, հանդիպող ծառատեսակների՝ *Platanus orientalis*, *Ailanthus altissima*, *Populus bolleana*, *P. gracilis*, *P. nigra*, *Ulmus parvifolia*, *U. foliacea*, *Fraxinus excelsior*, *F. pennsylvanica*, *Quercus robur*, *Robinia pseudoacacia*, *Acer pseudoplatanus*, *Robinia pseudoacacia* “Compacta”, *Sophora japonica*, *A. tataricum*, *A. negundo*, *Catalpa bignonioides*, *Coelreuteria paniculata*, *Pinus palassiana*, *Thuja occidentalis*, *Biota orientalis*, *Juniperus virginiana* և այլն, էտն ու ձևավոր-

բումը իրականացվում են «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կողմից յուրաքանչյուր տարվա գարնանը (մարտ-ապրիլ) և աշնանը (նոյեմբեր-դեկտեմբեր) նախապես կազմված գրաֆիկի համաձայն: Գեղազարդ թփատեսակներից լայն կիրառություն ունեն *Spiraea x vanhouttei*, *Ligustrum vulgare*, *Philadelphus caucasicus*, *Forsythia intermedia*, *Chaenomeles japonica*, *Syringa vulgaris*, *Berberis vulgaris*, *B.Thunbergi*, *Budlea Davidii*, *Hibiscus syriacus*, *Cotinus coggygria*, *Buxus sempervirens*, *Cornus alba* և այլն [4], որոնց ձևավորմամբ «ԿՇՄՊ ՀՈԱԿ»-ի մասնագետները ներքաղաքային տարբեր տիպի կանաչ տնկարկներում ստեղծում են ժամանակակից լանդշաֆտային դիզայնին համահունչ գեղարվեստական կոմպոզիցիաներ, ինչպես նաև ծաղկող և խուզվող կենդանի ցանկապատեր:

Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկների գեղազարդությունը բարձրացնելու համար մեր կողմից առաջարկվում է իրականացնել ծառերի ու թփերի սաղարթների ձևափոխություն արհեստական խուզման միջոցով:

1. Սովորական ձևափոխություն, երբ խուզման միջոցով ծառը ստանում է երկրաչափական մարմնի տեսք՝ գունդ, բուրգ, կոն, գլան և այլն, որի համար առաջարկվում ենք հետևյալ տեսակները՝ Թեղի տերևաշատ, Թ. գետնամերձ, Թ. մանրատերև, Բոխի արևելյան, Թխկի սրատերև, Լորենի կովկասյան, Բոնչի սովորական, Ճապկի սպիտակ, Սրնգենի կովկասյան և այլն:

2. Գծային ձևափոխություն, երբ բույսերը տնկվում են 1 կամ 2 շարքով և խուզման միջոցով ստանում են կենդանի ցանկապատ, վերջինիս համար առաջարկվում ենք Չմենի ամբողջաեզր, Յախակեռաս թաթարական, Կիպրոս սովորական, Տոսախ մշտադալար, Իլենի ճապոնական, Թույա արևմտյան, Կենսածառ արևելյան և այլն:

3. Պատկերային ձևափոխություն, երբ թփերը խուզելով նմանեցվում են կենդանիների, թռչունների, երբեմն արտասովոր կերպարանքների կամ էլ ճարտարապետական տարրերի՝ խոյակ, գավաթ, կամար, զամբյուղ և այլն, այս դեպքում առաջարկվում ենք Տոսախ մշտադալար, Կենսածառ արևելյան, Թույա արևմտյան, Կիպրոս սովորական, Ճապկի սպիտակ և այլն:

Եզրակացություն

Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում, հատկապես փողոցային տնկարկներում, 2023–2024 թթ. ընթացքում մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ծառերի սաղարթները նախկինում կատարված սխալ էտի հետևանքով աճել են անկանոն և առաջացրել ծառերի էտման ու ձևավորման անկառավարելի բազում խնդիրներ: Մայրաքաղաքի ներքաղաքային կա-

նաչ տնկարկներում, գլխավորապես փողոցային տնկարկներում, ելնելով գոյություն ունեցող տարաբնույթ իրավիճակներից, առաջարկվում է «ԿՇՄՊ ՀՈԱԿ»-ին նախ վերազինվել ծառերի էտման և ձևավորման ժամանակակից տեխնիկայով, ձեռք բերել հմուտ սղոցավարներ և, պայմանավորված ստեղծված իրավիճակով, կատարել ծառերի տարբերակված մասնագիտական սանիտարական էտ ու ձևավորում, անհրաժեշտության դեպքում նաև սաղարթի մասնակի երիտասարդացում:

Երևանի քաղաքապետարան, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ
grigoryan.artsvi@mail.ru



Նկ. 1. Ծառերի սաղարթի իրավիճակային էտման օրինակներ Երևանում



Նկ. 2. Խորը էտի օրինակներ Երևանում



Նկ. 3. Բարդինները երիտասարդացումից առաջ և հետո

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժ.Հ. Վարդանյան, Արծ.Ա. Գրիգորյան, Ա.Հ. Բեգոյան

Գեղազարդ ծառերի ու թփերի էտի և ձևավորման խնդիրները Երևանի կանաչ տնկարկներում

Քաղաքային կանաչ տնկարկներում, առաջին հերթին Երևանի փողոցային տնկարկներում, գեղազարդ ծառերի ու թփերի էտն ու ձևավորումը անհրաժեշտ ֆիտոտեխնիկական միջոցառումներ են, որոնք նպաստում են վերջիններիս կենսունակությանը և երկարակեցությանը, ինչպես նաև պահպանում են գեղազարդությունը: Երևանի պայմաններում վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում կատարված ոչ ճիշտ էտի արդյունքում ծառերը կորցրել են կենսունակությունը և ի վիճակի չեն ապահովելու իրենց ֆունկցիոնալությունը: Առաջարկվում է կատարել ծառերի մասնագիտացված սանիտարական էտ, անհրաժեշտության դեպքում նաև մասնակի երիտասարդացում:

Член-кор. НАН РА Ж.А. Варданян, Арц.А. Григорян, А.Г. Бегоян

Задачи обрезки и формовки декоративных деревьев и кустарников в зеленых насаждениях Еревана

В городских посадках, в том числе Еревана, обрезка деревьев – необходимое фитотехническое мероприятие, которое обеспечивает жизнеспособ-

ность и долговечность деревьев. За последние два-три десятилетия в Ереване проводилась неправильная обрезка деревьев, в результате чего нарушилась функциональность последних. Предлагается провести профессиональную санитарную обрезку, а при необходимости также частичное омоложение зеленого фонда.

**Corresponding member of NAS RA Zh.H. Vardanyan,
Arts.A. Grigoryan, A.H. Begoyan**

Issues of Pruning and Shaping Ornamental Trees and Shrubs in the Green Spaces of Yerevan

In urban plantations, including Yerevan, tree pruning is a necessary phytotechnical measure that ensures the viability and longevity of trees. In the last two or three decades, the trees were pruned improperly in Yerevan, as a result of which they lost their functionality. It is proposed to carry out professional sanitary pruning and, if necessary, also partial rejuvenation of the green fund.

Գրականություն

1. *Գրիգորյան Արծ.Ա.* Գեղազարդ պարտիզազորություն, ՀՊԱՀ, Եր., 2010, 276 էջ:
2. *Գրիգորյան Արծ.Ա., Խուրշուդյան Հ.Պ., Փաղևանյան Ա.Ս., Թադիսանյան Չ.Թ.* Գիտահետազոտական մեթոդներն ու եղանակները անտառագիտության և կանաչապատման մեջ, ուսումնական ձեռնարկ լսարատոր-գործնական պարապմունքների համար, Երևան, 2021, 90 էջ:
3. *Մարգարյան Ա.Ե., Շահինյան Հ.Ն.* Պտղաբուծություն, Ե., 1976, 560 էջ:
4. *Վարդանյան Ժ.Հ.* Ծառաբույսերի աճեցման և գեղազարդ տնկարկների ստեղծման առանձնահատկությունները Հայաստանում, Եր., 2020, 208 էջ:
5. *Վարդանյան Ժ.Հ., Մուրադյան Ն.Ն., Գրիգորյան Ս.Ս.* Էտն ու ձևավորումը՝ որպես ծառերի և թփերի կենսակայունությունը և գեղազարդությունը բարձրացնող ֆիտոտեխնիկական միջոցառում, Հայաստանի կենսաբանական հանդես, 2021, 3, (73), էջ 72–79:
6. *Анзин Б.Н.* Обрезка плодовых деревьев и ягодных кустарников, 1968, 224 с.
7. *Гельфандбейн П.С.* Обрезка и формирование крон плодовых деревьев, 1965, 383 с.
8. *Энциклопедия лесного хозяйства.* Т. 2, 2006, 416 с.

ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱ

ՀՏԴ 612.821+159.9

DOI: 10.54503/0321-1339-2024.125.2-67

Ե.Լ. Մինասյան

Հատուկ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների անցկացման գործընթացը պոլիգրաֆի կիրառմամբ հարցման շրջանակներում

(Ներկայացված է 18/XII 2024)

Բանալի բառեր. *պոլիգրաֆ, հոգեֆիզիոլոգիական ռեակցիաներ, հոգեֆիզիոլոգիական չափորոշիչներ, հատուկ հոգեֆիզիոլոգիական հետազոտություն, հարցաշար:*

Պոլիգրաֆը կամ Տստի դետեկտոր!-ը ճշգրիտ սարք է, որի միջոցով հնարավոր է դարձել բացահայտել թաքցված կամ թերասված տեղեկությունները՝ վերահսկելով ստուգվողի հոգեֆիզիոլոգիական ռեակցիաները, որոնք փոփոխվում են ի պատասխան տրվող հարցերի [2]:

Դասական պոլիգրաֆը կարող է միաժամանակ գրանցել ստուգվողի շնչառությունը, արյան ճնշումը, ուղեղի, սրտի, մկանային համակարգի կենսահոսանքները և այլ հոգեֆիզիոլոգիական չափորոշիչներ, որոնք փոփոխվում են մարդու հուզական վիճակին զուգընթաց [6]: Այս գործիքն օգտագործվում է կլինիկական բժշկության մեջ, կենսաբժշկական և հոգեբանական հետազոտություններում: Դյուրակիր (դաշտային) պոլիգրաֆը (полево́й полиграф) կամ Տստի դետեկտոր!-ը ստեղծվել է դասական պոլիգրաֆի հիման վրա, օգտագործվում է քրեաբանության մեջ՝ որպես հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների մեթոդ՝ հատուկ հոգեֆիզիոլոգիական հետազոտություն (ՀՀՖՀ) կամ պոլիգրաֆի կիրառմամբ հարցում (ՊԿՀ):

Վերը նշված մեթոդը գործ ունի մարդու հիշողության հետ: Այն, արթնացնելով մոռացված հույզերն ու զգացմունքները և հիշողությունը, ուղղված հարցերի շնորհիվ ստիպում է մարդուն գնահատել իր

կյանքի անցած փորձը, վերապրել որոշ դրվագներ, որոնք ունեն մեծ տեղեկատվական նշանակություն [1]:

Հարցման ընթացքում ստուգվողին տրվում են տարբեր ուժգնության հույզեր առաջացնող հարցեր, որոնց ազդեցության տակ փոխվում է մարդու զգացմունքային ֆոնը, ակտիվացնելով սիմպատիկ նյարդային համակարգը [11]՝ փոխվում են շնչառության հաճախականությունը, սիրտ-անոթային համակարգի աշխատանքը, մաշկի դիմադրությունը (մաշկի էլեկտրական ակտիվություն), մկանային լարվածությունը, ձայնային տեմբրը, նկատվում է թքարտադրության պակաս, ակտիվ քրտնարտադրություն, աչքերի բիբերի նեղացում և այլն: Այսինքն՝ հարցման ենթարկվող անձն ապրում է կարճատև սթրեսային վիճակ [1]: Այսպիսի փոփոխություններ գրանցվում են ստուգվողի մոտ, երբ իրեն ուղղված հարցն առաջացնում է հուզական բարձր մակարդակ: Չեզոք կամ հուզական ցածր մակարդակ առաջացնող հարցերը նման փոփոխությունների չեն հանգեցնում, կամ փոփոխությունները լինում են թույլ արտահայտված: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցման ընթացքում միաժամանակ գրանցվում և վերլուծվում են անկայուն հոգեֆիզիոլոգիական վիճակում փոփոխվող հետևյալ չափորոշիչները՝

1. Ֆոտոալլետիզմոգրաման (ՖՊԳ) սիրտ-անոթային համակարգում ընթացող փոփոխությունների գրանցման արդյունք է, որոնք տեղի են ունենում պերիֆերիկ անոթներում արյունալցվածության ժամանակ և կախված են կարդիոցիկլի փուլից [3, 8]: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցումների ժամանակ սիրտ-անոթային համակարգում ընթացող փոփոխությունները համարվում են գլխավոր չափորոշիչներից մեկը և ունեն բարձր տեղեկատվական նշանակություն:

2. Մաշկահալվանիկ ռեակցիան (ՄՀՌ) կամ մաշկի էլեկտրական ակտիվությունը վեգետատիվ նյարդային համակարգի գործունեության ցուցանիշ է: Որպես բիոէլեկտրական ռեակցիա՝ գրանցվում է մաշկի մակերևութից, ներկայացնում է քրտնարտադրող գեղձազատման գործընթացի ազդեցությունը մաշկի էլեկտրական ակտիվության վրա [1, 3, 4, 9, 11]: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցումների ժամանակ մաշկահալվանիկ ռեակցիան նույնպես համարվում է գլխավոր չափորոշիչներից մեկը և ունի բարձր տեղեկատվական նշանակություն:

3. Դիաֆրագմալ շնչառությունն իրականացվում է դիաֆրագմայի և որովայնի մկանների կծկման պատճառով, քանի որ գործընթացում ակտիվ մասնակցություն է ունենում դիաֆրագմայի կրծքային-որովայնային մասը [1, 3, 4]: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցումների ժամանակ շնչառությունը ևս համարվում է գլխավոր չափորոշիչներից մեկը և ունի բարձր տեղեկատվական նշանակություն:

4. Արյան զարկերակային ճնշում՝ անոթի պատի տվյալ հատվածի և առջևում առկա արյան բաժնի վրա գործադրած ճնշում: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցումների ժամանակ հաշվի են առնվում ոչ միայն արյան ճնշման մաքսիմալ և մինիմալ տվյալները, այլև ճնշման ընդհանուր փոփոխությունները ստուգման ընթացքում [3]:

5. Տրեմորը ներկայացնում է մկանների կծկումները, որոնք ուժեղանում են հուզական լարվածության ժամանակ և կախված են մկանի տոնիկական ակտիվության մակարդակից: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցումների ժամանակ տրեմորը հնարավորություն է տալիս բացահայտելու ստուգվողի կողմից հակազդելու փորձերը [1-3]:

Գրանցվող յուրաքանչյուր չափորոշիչ ունի վերլուծության հատուկ համակարգ: Հետազոտվում են պոլիգրամների այն հատվածները, որոնք տեղեկատվական են: Հաշվի են առնվում պոլիգրամի տևողությունը, տատանումների լայնությունը, թռիչքի (ամպլիտուդի) բարձրությունն ու նվազումը և այլն: Ամեն մի չափորոշիչ ունի սահմանված ժամանակահատված, որի ընթացքում կարելի է տեղեկատվական համարել գրանցված պոլիգրամը և վերլուծել դրանք՝ ստի բացահայտման նպատակով: Ստացված պատասխանները հաշվարկվում են որակական, քանակական և չափողական մեթոդներով:

Աշխատանքի հիմքում դրված են ճիշտ կազմված հարցաշարեր, որոնք բաղկացած են տարբեր ուժգնության հույզեր ու զգացմունքներ առաջացնող հարցերից: Թեստերի հիմքում որպես գլխավոր գործոն դրված է վերահսկիչ հարցը (ՎՀ), որից կախված է ստի բացահայտումը: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցազրույցի ժամանակ հարցը խթանիչ է, որի խնդիրն է արթնացնել, ակտիվացնել մարդու հոգեֆիզիոլոգիական ռեակցիաները, արտահայտել վերաբերմունքն այս կամ այն տեղեկության վերաբերյալ:

Այս պարագայում ռեակցիա է կոչվում արտաքին նպատակաուղղված ներգործությունից առաջացած օրգանիզմի արձագանքը: ՀՀՖՀ բնագավառում հիմնականում օգտագործվում են հոգեբանական խթանիչները՝ հարցը, նկարը, առարկան և այլն [10]:

Պոլիգրաֆը կարելի է անվանել բժշկական գործիք, քանի որ այս սարքը գրանցում է օրգանիզմում ընթացող որոշ փոփոխություններ, որոնք մանրամասն նկարագրում են մարդու հոգեֆիզիոլոգիական վիճակը հուզական ապրումների ժամանակ:

Սակայն այս գործիքը չի կարելի օգտագործել ամենուրեք և բոլորի նկատմամբ:

Հարցման չեն կարող ենթարկվել դեղորայք օգտագործող, ոգելից խմիչք կամ որևէ թմրանյութ ընդունած, հոգեկան խնդիրներ ունեցող,

քրոնիկ հիվանդություններով տառապող, ֆիզիկապես հյուծված կամ վատառողջ մարդիկ, հղի կանայք և երեխաներ [2, 5, 6]:

Պետք չէ նաև մոռանալ, որ ոչ մի գործիք չի կարող փոխարինել մարդկային շփմանը և ուշադրությանը: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցման արդյունավետությունը կախված է մասնագետի գիտելիքներից և հմտությունից: Մասնագետը պարտավոր է տիրապետել հարցման բոլոր մեթոդներին և հոգեֆիզիոլոգիական ռեակցիաների ճիշտ գնահատման եղանակներին, քանի որ իրենից է կախված հարցման արդյունքների վերաբերյալ եզրափակիչ եզրակացությունը [7]:

Եզրակացություն

Ներկայումս պոլիգրաֆը մեծ տարածում է ստացել պետական կառույցներում և առևտրային կազմակերպություններում՝ կադրային խնդիրների կարգավորման, աշխատակազմի պարբերական ստուգումների և իրավախախտումների բացահայտման համար:

Հարցման նպատակն է բացառել պոտենցիալ կամ իրական իրավախախտների ընդունումն աշխատանքի: Այս սարքի միջոցով հնարավոր է արագ ստուգել և ճշտել միտումնավոր թաքցրած կամ աղավաղված տեղեկություններ թեկնածուների անձնական կյանքի մասին՝ ապահովելով բարձրորակ կադրային ընտրություն:

ՊԿՀ պետք է իրականացվի միայն ստուգվողի համաձայնության դեպքում՝ անկախ կամարտահայտության ֆիքսման ձևից, առանց անձի նկատմամբ սպառնալիքների կամ բռնություն կիրառելու: Ամեն դեպքում ՀՊԿ անցնող անձի նկատմամբ չպետք է կիրառվեն նրա օրինական իրավունքները և շահերը սահմանափակող միջոցներ:

Ըստ միջազգային պոլիգրաֆիստների նորմերի՝ ՊԿՀ-ից հրաժարումը չպետք է դիտվի որպես հանցագործության կատարման մեջ անձի մեղավորության հաստատում կամ ապացույց: Համաձայնվելով այս տեսակետի հետ՝ պետք է նաև ընդունել, որ դա կադրերի ընտրության հարցում կարող է որոշակի հետևություններ անելու հիմք հանդիսանալ: Նշվածը չի նշանակում, որ ՊԿՀ-ից հրաժարումը թեկնածուին աշխատանքի չընդունելու պատճառ է, բայց այդ պարագայում կադրային աշխատակիցն ավելի զգոն պետք է լինի, պարզի ընդունվողի ազնվությունը և մնացած հետաքրքրող հանգամանքները՝ ուսումնասիրության այլ եղանակներով: ՊԿՀ մեթոդի կիրառումը պետք է վստահել միայն համապատասխան պատրաստվածություն ունեցող մասնագետին: ՊԿՀ արդյունքները նախատեսված են ոչ թե ստուգվողի մեղավորությունն ապացուցելու, այլ նախաձեռնողի ընտրության օպտիմալ ուղին որոշելու համար: Պոլիգրաֆի կիրառմամբ հարցումը ցանկալի է օգտագործել ՀՀ պետական և առևտրային կազմակերպությունների կադրային աշխատանքում, քանի որ այն իրական հնարավորություն է տա-

լիս գործատուին ապահովելու որակյալ ընտրություն և կայացնելու ճիշտ որոշում:

Անհրաժեշտ է ապահովել պոլիգրաֆի կիրառմամբ հարցման հոգեբանական, իրավական և տեխնիկական հարցերի լուծումը, կազմակերպել մասնագետների ուսուցումը և ստուգման նոր եղանակների մշակումը՝ համակարգելով Հայաստանի Հանրապետության առկա մասնագետների և հարակից գիտությունների ներկայացուցիչների՝ բժիշկների, հոգեբանների, քրեաբանների աշխատանքային փորձը:

Հետագայում ցանկալի է ստեղծել տեղական ուսումնական կենտրոններ մասնագետների պատրաստման համար, համակարգելով և ամրապնդելով միջազգային կապը ստի բացահայտման տարբեր դպրոցների հետ, ապահովել հանդիպումներ արտասահմանյան մասնագետների հետ՝ աշխատանքային փորձի փոխանակման համար և, ինչու ոչ, օգտագործելով գիտական միտքը՝ ստեղծել հայրենական պոլիգրաֆը:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
E-mail: elminasyan@yandex.ru

Ե.Լ. Մինասյան

Հատուկ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների անցկացման գործընթացը պոլիգրաֆի կիրառմամբ հարցման շրջանակներում

Ուսումնասիրվել է պոլիգրաֆը՝ որպես հատուկ հոգեֆիզիոլոգիական հետազոտություն իրականացնող սարք, որը հնարավորություն է տալիս մարդու հուզական վիճակի փոփոխություններին զուգընթաց գրանցելու շնչառությունը, արյան ճնշումը, ուղեղի, սրտի, մկանային համակարգի կենսահոսանքները: Ցույց են տրվել պոլիգրաֆի կիրառմամբ հարցումների նպատակը և կիրառելիության շրջանակները:

Е.Л. Минасян

Процесс проведения специальных психофизиологических исследований в рамках опроса с применением полиграфа

Исследован полиграф, являющийся прибором для процесса проведения специальных психофизиологических исследований, посредством которых, параллельно с изменениями эмоционального состояния человека, становится возможным регистрация дыхания, артериального давления,

биопотоков мозга, сердца и мышечной системы. Показана цель проведения полиграфных опросов и спектр применения.

E.L. Minasyan

The Process of Special Psychophysiological Research within the Framework of the Survey Using a Polygraph

The article studies polygraph, which is a device for the process of conducting special psychophysiological studies, through which, in parallel with changes in the emotional state of a person, it becomes possible to register breathing, blood pressure, bioflows of the brain, heart and muscular system. The purpose of conducting polygraph surveys and the spectrum of application are shown.

Գրականություն

1. *Александров Ю.И.* Психофизиология. М., 2003, с. 41, 81, 120, 127, 130, 143, 190.
2. *Варламов В.А.* Углубленные кадровые проверки. М., 2003, с. 67, 105, 374.
3. *Варламов В.А.* Психофизиология полиграфных проверок. Краснодар, 2000, с. 132, 135, 139.
4. *Милнер П.* Физиологическая психология. М., 1973, Мир, с. 129–130.
5. *Подшебякин А.С.* Инструкция о порядке применения органами ФСБ ОИП. М., Мир безопасности, 1999, с. 38
6. *Холодный Ю.И.* Применение полиграфа при профилактике, раскрытии и расследовании преступлений. М., 2000, Мир безопасности, с. 141, 143.
